



ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳԻԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՅՆ ՈՒ ՂՐԵԱՆ

Երբ Տրեփիտի խնդիրը ծագեցաւ, Փրանսայի հակահրեական մամուլը պնդեց թէ հրեայ զբամաւորներու ոճիաբա մը կ'աշխատի դատապարտեալ մատնիչը ստակի շնորհիւ արդարացնել: Դրական ո՛ր եւ է ապացոյց այս հնութարութիւնը չհաստատեց, բայց ներելի է ընդունիլ թէ Հրեաները կրօնակցի մը դատին համար նիւթական մեծ զոհողութիւններ կրնան ըրած ըլլալ: Տխմար մամուլ մը անհատի մը ոճի-սգործութեան պատասխանատուութիւնը — եթէ երբեք Տրեփիտ մատնիչ մըն էր — ամբողջ ցեղի մը վրայ ծանրացնելու արնելով, կը մղեր այդ ցեղը ինքնապաշտպանութեան գործնական միջոցը դատապարտեալին արդարացումէն սպասել:

Սէտիքան զոյութիւն ունեցած ըլլայ կամ ոչ, իրաւութիւնը այն է թէ աշխարհի բոլոր Հրեաները մարդկութեանը եւ հնարաւոր էր ընել ըրին ցեղակցի մը փրկութեանը եւ պաշտպանութեանը համար: Ինքնօգնութեան այս մեծահանդէս ցոյցը՝ հալածուած, բազմաշարքար ցեղ մը ընդհանուր մարդկութեան աչքին պտտեկոտելի եւ յարգելի կ'ընծայէ, վասն զի այդ ցեղին մէջ մեծ ուժի մը գոյութիւնը հզօրապէս կը հաստատուի: Ինքնապաշտպանութեան կողմէն համար անկարողները, անհաս ըլլան թէ հաւաքական մարմին, կ'արհամարհուին վասն զի տկարութիւններն կը հաստատուի:

Սիւալ մըն է հայ ցեղին հրեականին հետ բազմապատուութիւնը: Տրեփիտէն այլապէս ծանր զոհեր տուած ենք ու կը շարունակենք տալ: Հայաստան, Պոլիս, Թիւրքիոյ ամէն կողմը Հայերը Փրանսայի Հրեաներէն այլապէս վրտանգաւոր կացութեան մէջ են, եւ սակայն նոյն իսկ Եւրոպայի բազմահարուստ Հայերէն ոչ սք իր ազգակիցներուն մատուցած ծառայութեամբ մը յատկապէս իր վրայ հրաւիրած է Թիւրք իշխանութեան թշնամութիւնը: Փրանսայի մէջ հակահրեականներուն զայրոյթը էն առաջ Ռոչիլտին գէմն է: Հրեաները Եւրոպայի մամուլին գործը մէկ մասը իրենց ձեռքը ունին եւ ամէն պարագայի մէջ, ու մասնաւորապէս Տրեփիտի խնդրին առթիւ, սքանչելապէս գործածեցին զայն: Մեր բոլոր հարուստները երբեք

յանձնառու չեղան հայկական դատին նպաստաւոր մամուլ մը պատրաստել:

Ամէն ատեն որ ազգային դատին համար զբամի պէտք զգացուի, հայ հարուստը բազմաբազէտ իմաստասէր կամ խանգաւառ բանաստեղծ կը կտրի ու իր տխմար խորհրդածութիւններովը, կամ անհամ բացազանչութիւններովը ազգին ծառայութիւն մատուցանել կ'ուզէ: Հայկական խնդրին առթիւ 1878ին Խորէն Նար-Պէյ եպիսկոպոսը երբ Բեղրպուրի դնաց, զրամական այնքան մեծ նեղութեան մէջ էր որ պարտաւորուեցաւ պանդոկի մը հինգերորդ յարկը բնակիլ, և Ռուսիոյ նախարարապետը, ծերունի կորչաքօֆ իշխանը, Թիւրքիոյ Հայոց պատուիրակին այցելելու համար հարիւրաւոր ոսք սանդուղներէ վեր բարձրանալու հարկադրուեցաւ: Քիչ ետքն ալ Քարիլ, Հոսմ, Լոնտոն եւ անկէ Պերլին գացող պատուիրակութիւնը միշտ զրամական տագնապով տառապեցաւ: Աշխարհիս բոլոր հայ հարուստները մկտեղ գալով չկըրցին մէկ երկու հազար ոսկի Ներսէս պատրիարքի արտամարդութեանը տակ գնել:

Հայոց ունեւոր պատակարարին եւ հրեայ հարուստներուն միջեւ բազմապատուութեան եղբերը միմիայն բազմաբազէտ ծառայութիւններու սահմանին մէջ չենք պարիակիր: Երբ խնդիրը զուտ բարեգործական ու մարդասիրական պարտականութիւններ կատարելու շուրջը գտնուայ հայ ունեւորը հրեայ հարուստին ոսքի եղանակն իսկ չ'արկեր: Քանի մը օրինակներ:

Երբ Պոլսոյ Ազգային հիւանդանոցը պիտի վերստորոգուէր տասնըհինգ տարի առաջ Պոլսոյ էն շատ հարուստներէն մէկը վարպետարդիութեան դիմեց իր զրամական նուիրատուութեան բա՛կը զլանալու համար: Այդ վաճառականը եղբայրը յայտարարեցին թէ իրենք երկաթի գործէ շատ աղէկ կը հասկնան, հետեւաբար պիտի աշխատին որ հիւանդանոցին երկաթը վաճառականներուն կողմէ առանց մեծ շահու մատակարարուի, եւ միանգամայն ո՛ր եւ է խաբբայութիւն տեղի չունենայ: Այս պիտի աշխատութիւն մը մատուցանելով Հիւանդանոցին իրենք ալ եւս կ'ապատարուէին զրամական նուէրի մը հարկէն: Այս յայտարարութեան վրայ ուրիշներ ալ ձայն բարձրացուցին: Մէկ կը ըսու թէ ինք ատաղձի գործէ աղէկ կը հասկնայ, ուրիշ մը թէ՛ աշխատի գործէ, երբորդ մը՝ կ'զմիտարէ, եւ ա

մենքն ալ ուղեցին իրենց մասնագիտութիւնը Հիւանդանոցին վերաշինութեան ծառայեցնել, առանց իրենց գրպանէն ոսկի մը հանելու: Եւ այսպէս տարիներով յետաձգուեցաւ մարդասիրական հաստատութեան մը վերանորոգումը:

Ներսէս պատրիարք 1882ի համբաւաւոր հրաժարականը ետ առնելուն առթիւ Կ. Պոլսոյ հայ հարուստները միաբանութեամբ խոստացան Կեդրոնական վարժարանի մը հիմնարկութեան պէտք եղած դրամը իրենց մէջ հայթայթել. ստորագրեցին 1,200 ոսկիի չնչին գումարը, զոր զժկամակեցան վճարել Ներսէսի ողջութեանը, ու այնոր մահէն ետքը բուռն ճնշումներով հազիւ կարելի եղաւ հանդիսաւոր խոստումը գործադրել տալ իրենց:

Գարակէօզեանի կտակը 30 տարի անգործադրելի մնալէ յետոյ նոր կտակ մնալ կը բարդուէր վրան. ու այդ Գարակէօզեան ընտանիքը որուն ոսկիները միլիոնով կը հաշուուին, առանց ամէնալու ազգին աղքատներուն բերնէն կորզեց կտակուած գումարին վեց բաժնէն հինգը:

Այդ հարուստները ամէն տեղ կը պարծնան իրենց բարեպաշտական զգացումներուն վրայ. եւ սակայն թող տուին որ Երուսաղէմի վանքին պարտքը ամբողջապէս Հայաստանի աղքատները վճարեն, զինուորական տուրքին վրայ յաւելումով մը, — իրենց հարուստները Պոլիս կամ Երուսաղէմ ազատ ըլլալով այդ տեսակ տուրքէ:

Ոչինչ կ'ընեն ցեղին յառաջդիմութեանը, զարգացումին, պահպանութեանը: Հազիւ թէ Բարիզ գտնուեցան մէկ երկու ունեւորներ որոնք փոքր ի շատէ աջակցեցան ուսանողներու, կամ օգնեցին տառապեալներու: Այս տեսակ աջակցութիւնները որքան որ ալ համեստ չափով մը բաշխուած են բայց եւ այնպէս եթէ ամէն խոշոր դրամատէր Հայ հանգէպ իր ազգակիցներուն ունեցած պարտականութիւնը այսքան չափով մը կատարած ըլլար, ազդը գոհունակութեան զգացում մը պիտի ունենար. մատուցուած այդ մասնակի ծառայութեանց հաւաքական դումարը բաւական պատկառելի արդիւնք մը պիտի կրնար առաջ բերել:

Մեր հայ հարուստները, մանաւանդ Մանչէսթըրի յանձնակատարներն ու վաճառականները, շատ մեծակալ դումարներ պարտական կը մնան երեք տարուան թափուած հայ արիւնին: Անոնցմէ շատերը կոտորածին ու թալանին շնորհիւ ահագին հարստութիւն զիջեցին: Հայերէն յափշտակուած դրամին մէկ մասը պարձաւ դարձաւ ու Մանչէսթըրցիներուն սնտուկը գլտորեցաւ. ու այդ մարդիկը կիսալրօսի որբանոցին չնչին գումար մը յատկացնելէ, մանր մունր քանի մը փշրանք ալ ասդին անդին նետելէ դատ ոչինչ ըրին կամ կ'ընեն:

Թիւրքիոյ Հայոց ունեւոր դասակարգը վերջին կէս դարուն մէջ հիմնովին փոխուեցաւ. հին հարուստ ընտանիքներէն Կ. Պոլիս ոչ ոք մնաց. Խորիմի պատերազմէն ետքը ունեցանք նոր հարուստներ զորոնք եթէ իրենց նախորդներուն հետ բաղդաանք՝ շատ ստորին կը գտնենք: Հին հարուստները աղնուական զգացումներ ունէին. իրենց ժամանակին պաղափարներուն հպատակելով կը ջանային

ազգին ծառայութիւն մատուցանել: Հարստացուցին Էջմիածնի, Երուսաղէմի, Հայաստանի վանքերը, եկեղեցիներ կանգնեցին, պարոցներ շինեցին: Վենետիկէն վիթխարի հրատարակութեանց ճակատը Տիւզեաններու, Տատեաններու անունները գրոշմուած կը տեսնենք: Պատմութիւնը, աւանդութիւնները ցոյց կուտան թէ մեր հին հարուստները մտաւորականին կիրքը ունէին, դադափարներու կը սիրահարուէին. ուստի եւ կը վիճէին, կը կռուէին, մինչեւ իսկ իրար կը հալածէին զուտ կրօնական խնդիրներու համար: Եթէ քիչ մը ուշադիր ըլլանք կը տեսնենք թէ հիւսանական հարուստները ո՛ր եւ է ազնուական փառասիրութիւն չունին, ո՛ր եւ է ազնիւ զգացում չեն տածեր, իսկական մը իրենց մտքին երբեք չէ հպած: Ինչ որ մարդս բարոյապէս կը տարբերէ անասուններէն, բացակայ է անոնց սրտէն ու մտքէն: Բնազգով, առեւտրական հոստուութեամբ, զիպուածին բերումով, այսպէս թէ այնպէս հարստացած են, բայց միշտ անասունէն զէպի մարդ փոխանցումի սահմանազրկին վրայ կը զեղերին, աւելի անդին, անասնութեան մէջ, քան ասդին:

Հայ հարուստ դասակարգին ներկայացուցած այս տըխուր տեսարանին ջով երկու ուրիշ դասակարգ՝ աղքատ ժողովրդէն բղխած երիտասարդութիւնը եւ մտաւորականները Հրեաներուն հետ ոչ միայն համարձակօրէն կրնան բաղդատուիլ այլ և գերազանցութիւնը իրենց ցեղին կողմը կը հակեն: Հրէութիւնը շարտադրեց տակաւին երկասարդութիւն մը որ իր կեանքը խանդավառ զոհէր հայրենիքի մը իտէականին, մինչ հայ ժողովրդին աղիքներէն հազարներով կը ժայթքէին իրենց ցեղին համար կրակին մէջ, սուրին առջնատուները: Ուսակաւաթիւ չեն մտաւորականները որոնք աչքերին յառած ապաղայ երջանիկ հայ հայրենիքի մը հեռապատկերին, սիրայօթար յանձնառու եղան հանգստութեան, կեանքի ամէն զիւրութիւններու զահողութեան, հալածանքի, բանտի, տանջանքի, մահուան: Այդ երկու դասակարգերն են որ իրապէս կը ներկայացնեն հայ ցեղը ու կը հաստատեն իրր ազգ եւ ժողովուրդ ապրելու անոր անբնաւարարելի իրաւունքը: Այդ դասակարգերն են որ մտցնել կուտան հայրենիքին վիժած զաւակները, կը սրտասպնդեն հայ ազգութիւնը եւ կը հաստատեն թէ Հրեաներէն ստորին ցեղ մը չենք: Թափուած արիւնը շոտլուած ոսկին կ'արժէ եւ կը գերազանցէ ալ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Գ

Նախորդ յօդուածով պատմեցի թէ 1876ին սկիզբները վեց երիտասարդ միաբանած էինք կազմելու համար ընկերութիւն մը որ Հայաստան ուսում տարածէր: Առա-

Ղին անդամ Օրթագեղ ժողով մը գումարելով Պ. Փորթուզալիանը ատենապետ ընտրեցինք, եւ ուրիշ երիտաւարք մը ատենադպիր: Գործի ձեւնարկելու համար մեզի պէտք էր՝ անուն մը, կանոնագիր մը, նպատակի հասնելու համար միջոցի սրոշում: Ամիսներէ ի վեր քոյմ պատրաստ ծրագիր մը կար: Կը փափաքէի ընկերութեան անունը «Նալբանդեանց» գնել: Կովկասցի յեղափոխական բանաստեղծը գրաւած էր մեր պատանեկութեան սրտերը: Սիպիր մեռած էր Նալբանդեանց իբր յեղափոխական, ու «Ազատ Աստուած»ը իր սրտէն գուրս փայթեցած էր մէկ ցայտունով ափսոսանքով ան ըրողին երբ սեւ կտորը իր գրան առջեւ կանգ առած էր զինքը մինչեւ Սիպիր բշտու: Հիմա ա՛յ գիտէինք թէ ճշմարտութիւնը վիպական զրոյցներով խառն էր, բայց «Ազատ Աստուած»ը միշտ մեր ազգային երգն էր, ու ինչ որ հաւտացած էինք անջնջելի յիշատակ մը թողած էր սրտերնուս վրայ: Պ. Փորթուզալեան փափաքեցաւ գործնական կեանքի գաղափարը սուտը անունով մը մկրտել նոր ընկերութիւնը, «օրինակ, ըսաւ, Երկաթագործ եղբարք, կամ այսպէս մի բան»: Ուրիշներ ըզձացին ազգային ընդհանուր գաղափար գործուցանող անուն մը. եւ «Արարատեան»ը ընդունուեցաւ միաձայնութեամբ: Յետոյ կարող գալով կանոնագրին, ներկայացուցած ծրագիրս, սը կը բազմանար տասը յօդուածէ, ընդունուեցաւ: Կանոնագրին զխաւոր հիմերն էին, 1. Անգամները միաձայնութեամբ ընդունիլ. 2. Չորս անգամէ գործադիր ժողով մը, որուն պիտի անգամակցէր ընդհանուր ժողովին տտենապետը. 3. Ընկերութեան գանձած գրամէն հարիւրին տասը միայն պահեստի գնելով, մնացածը ամբողջապէս յատկացնել նպատակին:

Կանոնագիրը ընդունուելէ յետոյ, խորհեցանք նպատակը իրագործելու միջոցներուն վրայ: Նպատակնիս սրոշ էր. Հայաստան ձրիարար սուտմ՝ եւ արհեստ տարածել, բայց լաւագոյն համարեցինք նախ եւ առաջ բանի մը Հայաստանցի պատանի Պոլիս մեր սեզածին պէս կրթել, արհեստ սորվցնել, ու անոնք իբր նախակրթիչ վարժապետներ Հայաստան խրիել եւ անոնց միջոցաւ նախակրթարանները հիմնել: Այս առաջարկութիւնն ալ ընդունուեցաւ:

Արարատեան ընկերութիւնը այսպէս կազմուած հըռչակուեցաւ 1876 ապրիլ 15ին, եւ մենք չորսերնիս Գործադիր ժողովի պաշտօնը ստանձնեցինք:

Գործադիր ժողովը անմիջապէս 10 փարանոց նուիրատուներ հրապարակ հանեց, եւ յատուկ նամակներով Օրթագեղ ցրուեց: Կամաց կամաց ընթանալու առաջադրութիւն ունէինք: Շուտով բաւականաչափ գումար ունեցանք, եւ երկու պատանի ընդունեցանք իբր աշակերտ. տան մը մէջ սենեակ մը վարձելով, աղաքը հոն գրինք, ուտեստը, զգեստը, ամէն ինչ հոգալով: Առ այժմ թաղին վարժարանը պիտի երթային նախակրթական ուսումի համար. երբ աւելնար աշակերտներուն թիւը այն ստեն մասնաւոր ուսուցիչներու միջոցաւ պիտի կրթէինք զիրենք:

ժամանակնուն մէկ մասն ալ արհեստաւորներու խանութը անցնել տալովը:

Մէկ երկու ամսուան մէջ սակայն Արարատեանի անգամներուն թիւը աւելցած էր. յուլիսին գումարուած ընդհանուր ժողովի մը մէջ նոր ընկերներէն ումանք փափաքեցան անմիջապէս Հայաստան վարժարաններ բանալ, ժամանակ շահելու համար: Պ. Փորթուզալեան յանձնառու ըլլալով երթալ անձամբ գործել Հայաստան, առաջարկը ընդունուեցաւ, եւ Գործադիր ժողովին յանձնուեցաւ որոշել այն նահանգը ուր պիտի հիմնուէր առաջին նախակրթարանը: Գործադիր ժողովին մէջ ումանք Տիգրանակերտին կ'ուզէին նախապատուութիւն տալ, իսկ ես կը յարէի Վանին. իմ փաստերու ընկերներս ալ համոզուելով Պ. Փորթուզալեանի ուղեւորութեան պատրաստութիւնները տեսնեց: Պ. Փորթուզալեանը նոր պաշտօն մը ստանձնելով Պոլսէն պիտի հեռանար, ուստի ընդհանուր ժողովին նոր ատենապետ մը պէտք եղաւ ընտրել, եւ Պ. Մ. Չերազ ընտրուեցաւ:

Օգոստոսի երկրորդ շաբաթը Օրթագեղ իմ բնակարանս գիշեր մը հաւաքուեցանք Գործադիր ժողովի անգամներս եւ Պ. Չերազ ու Պ. Փորթուզալեան. կարդալու թիւներն բրինք, սրոշումները տուինք: Պ. Փորթուզալեան Արարատեան ընկերութեան կրթական տեսուչի պաշտօնով Վան պիտի երթար, հոն դանելու Չաքար Համբարձումեանը եւ Ալիւր գեղին մէջ բանալու Արարատեան առաջին նախակրթարանը: Աստուածածնի շաբաթ օրը, 1876ին, խանդով, եւանդով ճամբայ գրինք Պ. Փորթուզալեանը: Ինչ յոյսեր:

Կը ջանայինք օրագրութեան միջոցաւ շատ խօսեցնել շտալ նորակազմ ընկերութեան վրայ, հետեւաբար Արարատեանի առաջին տարիներու մասին Պոլսոյ մամուլին մէջ շատ բան կարելի չէ գտնել: Միայն բարեկամներու շրջանակի մէջ խօսելով եւ գործելով առաջ կը տանէինք ընկերութիւնը:

Պ. Փորթուզալեան ընդարձակ տեղեկագիրներով Վանէն հետզհետէ մեզի կը ծանօթացնէր Հայաստանի զեղերուն իրական կացութիւնը, ու մենք շատ բան կը սորվէինք Պոլիս - Երթական տեսուչը Վասպուրականի գանազան կողմերը ուսումնասիրելով կը դէր ճամբան ուսից պէտք էր կրթական գործը յառաջանար: Վանէն սկսած զէպի ոահմանազուլիս պէտք էր երկարէին զպրօցները: Իւ այս ուղղութեամբ ալ հետզհետէ բացուեցան նախակրթարաններ կէժ, կիւսննց, խարակոնիս, Գործօթ, առաջին վարժարանը արգէն Ալիւր բացուած ըլլալով: Հոն Չաքար Համբարձումեան, ուսումնասէր, հայրենասէր, երանգուն եւ ազնիւ, նշանաւոր կերպով ծառայութիւն կը մատուցանէր կրթական գործին եւ հայրենասիրական ոգիի ծաւնլումին:

Հայ ազգին համար ուշագրաւ նորութիւն մըն էր Հայաստանի հեռուոր զեղերուն մէջ Պոլսեցիներու ձեռքով նախակրթարանի հիմնարկութիւնը. եւ օրքսն աւելի մենք լուր կը մնայինք այնքան աւելի հանրութիւնը կարեւ

տրութիւն կ'ընծայէր մեր ձեռնարկներուն եւ անոնց ուժ կուտար: Վերոյիշեալ Հինգ զեղերէն երկուքին գպրոցները Արարատեանի ձեռքով բացուած էին ուրիշներու նուիրատուութեամբ: Բարեգործական ընկերութիւնը, որուն մասին խօսեցայ նախորդ յօդուածով, պատրաստի գրամագրոսի մը ունէր. անոր տոկոսէն տարեկան 40 սկի յատկացուց Վասպուրականի գեղ մը Բարեգործական ընկերութեան անունով վարժարան մը բանալու: Դիմեցինք նաեւ Սանասարեանին, որ տարեկան հազար ֆրանք ապահովելով իր անունին նախակրթարան մը բացաւ Արարատեանի միջոցաւ:

Ընկերութիւնը ապահով էր որ կարճ ժամանակաւ միջոցի մէջ պիտի կրնար Վասպուրականի գեղերէն մեծ մասը նախակրթարաններով օժտել: Ո՛չ միայն ընկերութեան գրամագրոսի այս գործը գլուխ պիտի ելլէր այլ եւ նիւթապէս կարող Հայերու ձեռնասուութեամբը: Արարատեան ծրագիրն էր նաեւ ո՛ր եւ է գեղի մէջ չորս տարի միայն գպրոց պահել: Հատալով կրթութեան ուժին համոզուած էինք թէ երբ գեղի մը մէջ մեր ուզածին պէս դաստիարակուած սերունդ մը հասնէր, այլ եւս Արարատեանի աշակերտները իրենք կրնային գպրոցը պահել, եւ ընկերութիւնը իր գրամը, ինչպէս նաեւ յատկապէս վարժարան մը բանալու համար յատկացուած գրամը, սրբիչ գեղերու կրթութեանը յատկացնել:

Պ. փորթուզալեան կը շարունակէր տեղեկադիրներով ընկերութեան ծանօթացնել Վասպուրականի գեղերուն բարոյական, մտաւորական, տնտեսական, առողջական կացութիւնը: Մանրամասնօրէն պատրաստուած վիճակագրութիւններ ցոյց կուտային ամէն մէկ գեղէ պանդուխտներուն թիւը, իւրաքանչիւր գեղի պարտքին քանակը: Ու մենք Պոլիս ճշգրիտ գաղափար մը կազմելով հայրենիքին վրայ կաշխատէինք ըստ այնմ կրթական տեսչին հետ խորհրդակցութեամբ հիմնել կրթական գրութիւն մը որով հայ ժողովուրդը ինքն իր աշխատութեամբ կարենար բարոյապէս եւ նիւթապէս վերականգնել:

Պ. փորթուզալեանի այցելութիւններէն զեղացի հայ ժողովուրդը սկսաւ սիրտ առնել, եւ քաջալերուել իր նշնութիւններուն մէջ, զգալով թէ հեռուն իրեն համար խորհող ու աշխատող Հայեր կը գտնուին: Այն գեղը ուր գպրոց կը բացուէր հոն վարժապետը ամենամեծ հեղինակութիւն մըն էր իբր Արարատեանի ներկայացուցիչը: Վարժապետը զեղէն բան մը չէր ստանար, տեղացի ազաններուն ստրուկը չէր, այլ ամէնուն իշխանը, իրեն յենարան ունենալով զօրաւոր մարմին մը: Գեղացիները իրենց մէջ օրէնքներ գնելով գեղին վերաբերեալ բոլոր հարցերուն համար վարժապետին միջոցաւ կը զիմէին օղզակի տեսչին կամ Պոլիս Գործադիր ժողովին. ջուրի, առնելիքի-տալիքի, այգիի ո՛րքան խնդիրներ ներկայացան մեզի:

Կրթական սրբիչ ընկերութիւն մըն ալ 1877ին սկսաւ Պոլսէն գործել Հայաստան: Ղալաթա-Սարայի Լիւէին հայ աշակերտները գպրոց եղած ատենին Դպրոցասիրաց

ընկերութիւն մը կազմած էին զպրոցներու գիրք-թուղթ կէն. հայթայթելու նպատակաւ. այդ ընկերութեան անդամները հիմա երիտասարդներ էին եւ կը պատրաստուէին հանրային կեանքի մասնակցութեան: Որոշած էին իրենք ալ Արարատեանի նման գործել Հայաստանի գաւառ մը նշանակելով իրենց կրթական գործունէութեան կեդրոնաւայր: Ու արդարեւ քիչ ետքը Փիլիպպոս անունով երիտասարդ մը Մուշ կը խրկուէր Լիւք գեղը նախակրթարան մը հիմնելու նպատակաւ. ետքէն ալ Պ. Սարգեան ամբողջ Տարանի կրթական տեսուչ նշանակուելով Մուշ, Ալաշկերտ ալ Դպրոցասիրաց վարժարանները կը հիմնուէին: Այդ միջոցին Օրթագեղի երիտասարդներուն կազմած Արեւելեան ընկերութիւնը միանալով Դպրոցասիրացին, վերջապէս կը կազմուէր Դպրոցասիրաց-Արեւելեան ընկերութիւնը:

Գրեթէ միեւնոյն ատենները Պոլիս կազմուեցաւ Խիզանու Ռուսիասիրաց ընկերութիւնը որուն նպատակն էր Խիզան նախակրթութիւն տարածել. Տրպիզոնցի երիտասարդ մը, Պ. Յակոբ Մեղաւորեան, այդ ընկերութեան կողմէն կրթական պաշտօնով Հայաստան գնաց:



Ռուսութիւրք պատերազմը առանց մեծապէս վնասելու մեր կրթական ձեռնարկներուն փոքր ինչ խանգարեց եղած կարգադրութիւնները: Պ. փորթուզալեան հարկադրուեցաւ ամսամասպէս հեռանալ վանէն եւ անցնիլ Կովկաս: Արարատեանի տեսուչին այս ուղեւորութիւնը նշանաւոր արդիւնքներ առաջ պիտի բերէր, անակնունելի զարկ մը պիտի տար մեր կրթական ձեռնարկներուն, եւ նոր թուական մը պիտի բանար Ռուսիոյ եւ Թիւրքիոյ Հայոց յարաբերութեանց համար:

Օր մը Թիֆլիզէն մեզի հասաւ թերթերու ծրար մը զոր Պ. փորթուզալեան կը խրկէր: «Մշակ» անունով թերթ մըն էր, խմբագիրը՝ Գրիգոր Արծրունի: Երկու անուններն ալ անծանօթ էին մեր շրջանակներուն: Մենք միայն «Մեզու Հայաստանի» մը լսած էինք, անոր ալ մէկ թիւը միայն օր մը զիպուածով ձեռքերնիս անցած էր, անհամ, ողորմելի հրատարակութեան մը տպաւորութիւնը թողլով: «Մշակ»ը շատ ախորժանքով կարդացինք: Գաղափարներու ազատականութիւնը, կարուկ ոճը, խմբագրական կազմութիւնը հաճելի երևցան մեզի: Միեւնոյն ատեն Պ. փորթուզալեանէն ստացանք նամակ մը որով կը ծանուցանէր թէ «Մշակ»ի խմբագիրը տրամադիր է Արարատեան ընկերութեան ի նպատակ նուէր հաւաքելու: Մեր կրթական ծրագիրը Հայաստանի զարգացումին շատ նպատակայարմար գտած էր Արծրունի, ու բնիկ Պոլսեցի երիտասարդի մը, սրպիսին էր փորթուզալեանը, պատերազմի տաք ատենը Վասպուրական երթալով կրթական գործին աշխատելու յանձնառութիւնը լաւ ազդեցութիւն մը գործած էր Արծրունիին վրայ: Պ. փորթուզալեան Արծրունիի խորհրդով Թիֆլիս ուստական իշխանութեան զիմիւր բացատրած էր Արարատեանի նպատակ

կը եւ հանգանակութեան մը թողտուութիւնը խնդրած էր: Ուզած արտօնութիւնը ստանալով Պ. փորթուզալեան Պոլիս մեզի գրելով հրահանգ կը սպասէր «Մշակ»ի միջոցաւ հանգանակութիւնը սկսելու համար:

Մեզի համար խնդիրը կնճուտ էր. ուսեւթիւրը պատերազմին ատեն Ռուսիայէն հանգանակութիւն մը ընելով կրնայինք թրքական կասկածներ հրաւիրել մեր վրայ եւ վաճառել նորակազմ ընկերութեան գոյութիւնը: Բայց կը զգայինք նոսեւ թէ կովկասէն աջակցութիւն մը զօրաւոր զարկ պիտի տար մեր յառաջդիմութեանը: Հարկ եւ զաւ խնդիրը ընդհանուր ժողովին ներկայացնել: Երկար վիճաբանութիւններէ յետոյ ընդունուեցաւ կովկասէն ի նպաստ Արարատեանի հանգանակութեան մը սկզբունքը, պայմանաւ սակայն որ «Մշակ» ո՛ր եւ է հրատարակութիւն չընէր այլ Պոլսոյ նման պարզապէս բարեկամական շրջանակներու մէջ ստացուին նուիրատուութիւնները: Ո՛րքան ազէա էինք կովկասեան բարքերուն: Ժողովին այս որոշումը հաղորդելով Պ. փորթուզալեանին միեւնոյն ժամանակ իր խոհեմութեանը թողուցինք հանգամանքներուն համեմատ գործել, հաւատարմով որ յաջողութիւնը անկանոնութիւնը ժողովին կուտայ: Եւ ահա բիշ վերջը «Մշակ»ի մէջ տեսանք Արարատեանի ի նըպաստ հանգանակութեան հրաւեր մը: Արժրունին 1876ի Վանի հրդեհին առթիւ հանգանակած զրամէն 1,000 ռուպլի աւելցուցած էր. անմիջապէս այդ գումարը Արարատեանին խրկեց: Մեզի համար մեծ բան մըն էր մէկէն ի մէկ այդքան ստակ ընդունիլ, մինչ տանական փարայով լռութեան մէջ մանր մունր գումարներ կը հաւաքէինք: «Մշակ»ի մէջ նուիրատուութիւններն ալ սկսան հրատարակուիլ: Գործը յաջողութեամբ կը սկսէր, եւ այդ պահուն թիւրք կառավարութիւնը այնքան զբաղած էր որ եւ սչ իսկ ուշադրութիւն զարձուց թիւրքիոյ մէջ կազմուած ընկերութեան մը թիւրքիոյ հետ պատերազմի բանուած թշնամի երկրէ մը զրամ հաւաքելու տարօրինակ երեւոյթին վրայ:

Պ. փորթուզալեան թիֆլիզ եղած ատեն կարգ մը լուրեր ուզեց ինէ Պոլսոյ գործերու մասին, յատկապէս հայկական խնդրին վերաբերեալները: Անհատական նամակներով, զոր Հայկակ կը ստորագրէի, իրեն գրեցի օրուան խնդիրներու վրայ: Օր մըն ալ զարմացած մնացի այդ նամակները «Հ» սկզբնատառով «Մշակ»ի մէջ յանկարծ հրատարակուած տեսնելով: Պ. փորթուզալեանէն տեղեկութիւն ուզեցի այդ հրատարակութեան համար, պատասխանեց թէ նամակներս Արժրունիին ցոյց տուած ըլլալով, տնիկա հաւանք է անոնց եւ «Մշակ»ի մէջ հրատարակել ուզեր է: Այս եղաւ «Մշակ»ի հետ իմ սերտ յարաբերութիւններու ինչպէս եւ թղթակցութիւններու սկզբնաւորութիւնը: Առանց կանխաւ որոշումի մը յանկարծ կուտող հրատարակագրութեան մէջ կը մտնէի անհատական մէկ երկու նամակներու պատճառաւ: Ա՛ն անգամ մը հասանքէն բանուած չէի գիտեր ո՛ւր զպար պիտի առնէի: Կեանքի մը ամբողջ յեղաշրջումն էր:

Երբ Պ. փորթուզալեան Պոլիս վերադարձաւ յայտնեց որ Արժրունին թղթակցութիւններու շարունակութիւնը կը խնդրէր: Ետտ վարանոտ էի, շա՛տ վախկոտ էի կովկասի Հայոց համար գրելու վերջնական որոշում մը տալու: Առաջին փորձերը ըրի, եւ ահա թղթակցութիւններս Արժրունին ա՛լ «Հայկակ» ստորագրութեամբ կը հրատարակէր, ու մասնաւոր նամակներով շնորհատուութիւն եւ շնորհակալութիւն յայտնելէ զատ, «Մշակ»ի մէջ եւ կը յայտարարէր թէ կովկասի մէջ Հայկակի ազդեցութիւնը օրէ օր կ'աւելնայ: Արժրունիէն եկած այս քաջալիրանքը սրտապնդեց իս, զգացի թէ «Մշակ»ի միջոցաւ կարող պիտի ըլլայի Ռուսիոյ և թիւրքիոյ Հայոց փոխադարձ ծանայութիւններ մատուցանել, եւ միանգամայն օգտակար ըլլալ Արարատեան ընկերութեան Ռուսաստանի մէջ: Իմ թղթակցութիւններովս միանգամայն կը յուսայի փոքր ծանայութիւն մը մատուցանել Արժրունիին որ այնքան հզօր աջակից մը կը հանդիսանար Արարատեանին:

Կովկասէն եկած առաջին նուիրատուութիւններու լուրերը շուտով տարածուեցան ամբողջ Պոլիս եւ բարսյական աներեւակայելի ազդեցութիւն ունեցան: Մինչեւ այն ատեն Կ. Պոլսոյ ո՛ր եւ է ընկերութիւն Ռուսիոյ Հայերէն աջակցութիւն չէր գտած: Թիւրքիոյ Հայերը այն ատեն արտակարգ յարգանք կը տածէին կովկասեան Հայոց համար, սուտի եւ ահնաճիլի վտտահութեամբ մը սկսան պատել ընկերութիւն մը որ այդ պատկանելի ուսահպատակ Հայոց սկսն ու համարուած զբաւել կը յաջողէր: Եւ որովհետեւ ընդունուած ճշմարտութիւն մըն է թէ յաջողութիւն մը միշտ իր հետք ուրիշ յաջողութիւն մը կը բերէ, ուստի եւ թիւրքիոյ Հայերն ալ աւելի եռանդով նպաստեցին Արարատեանի: Պոլսոյ բոլոր թաղերը մասնախումբեր կազմուեցան յարատեւ աջակցութեան համար: Իզմիր, Եշիպտոս, Տրապիզոն, ուրիշ շատ քաղաքներ նմանօրինակ մասնախումբեր հաստատուեցան:

Պ. փորթուզալեան թիֆլիսէն խրկած էր նաեւ Նիկողայոս Տէր-Ղեանդեանցի «Մայրենի լեզու»ին առաջին տարին, մեր բարբառին վերածուած, և կովկաս տպագրուած, նուիրատուներու ծախքով: Այդ գասագիրքը մինչեւ հիմա թիւրքիոյ Հայոց նախակրթութեան գործին մէջ կարեւոր տեղ մը բռնած է: Հետզհետէ միւս տարիներն ալ տպագրուեցան Արարատեանի կողմէն, ու սչ միայն կրթական ընկերութիւններուն այլ ամբողջ Պոլսոյ եւ Հայաստանի զպրոցները տարածուեցան, ընկերութեան աւելն ատարի 400 սակի շահ մը թողով:

Արարատեան ընկերութեան գտած ընդունելութիւնը այլ եւս հնարաւոր կ'ընէր աւելի ընդարձակ գործունէութեան մը ձեռնարկները: Ռուսեւթիւրք պատերազմը վերջացած էր. ինքնաշխատ ինքնօրնութեամբ վերակենդանանալու զազափարը Պերլինի Վեհամոզովէն ետքը Հայոց մաքերուն մէջ կը տեղաւորուէր: Հայաստանի կրթութեանը համար աշխատող մարմինները մեծ պարտականութիւններու ներքեւ կը մնային:

Հայաստանը հիմա մեզի բուսական ծանօթ էր երկու

տարուան անընդհատ յարաբերութիւններով. իսկ Պ. Փորթութուզաւեան հիմնովին ուսումնասիրած էր մասնաւորապէս Վասպուրականը: Թիֆլիսէն Պոլիս վերադառնալով մեր ընկերը, միասին սկսանք խորհրդակցել տպագրայ ծրագիրներու մասին: Պ. Փորթութուզաւեան 1876ին Պոլսէն մեկնած էր իբր առժամեայ այցելու մը, իսկ հիմա Հայաստան պիտի վերադառնար իբր մշտատեւ աշխատող մը. ընկերութիւնը մեծ դիրք մը զբաւած էր Հայոց կեանքին մէջ, եւ իր պատասխանատուութիւնները շատ մեծ էին: Պ. Փորթութուզաւեան իբր Արարատեան տեսուչը մասնաւոր պայմանադրութեամբ կապուեցաւ ընկերութեան հետ: Այդ պայմանադրութեան մէկ յօդուածը շատ յատկանշանական է, եւ մեր մտքին ուղղութիւնը ցոյց կուտայ: Պ. Փորթութուզաւեան իր կրթական պաշտօնէն դուրս ուրիշ ո՛ր է ազգային գործի չմիջամտելու պարտականութիւնը յանձն պիտի առնէր: Եռանդոտ, խանդավառ հրապարակագիր գործիչը կ'ըմբոստանար այսպիսի պայմանի մը զէմ. չէր ուզեր այդպիսի պարտականութիւն մը յանձն առնել. բիշ մնաց որ բոլոր յարաբերութիւնները պիտի խզուէին: Այդ յօդուածին գաղափարը եւ էի յղացած. եւ հիմա շուարած կը մնայի: Առանց Փորթութուզաւեանի բան մը ընել անհնարին պիտի ըլլար, իսկ առանց այդ կաշկանդումին կը վախնայի թէ Ասիայի Փորթութուզաւեանը երեւան կուզար: Գործագիր ժողովի նիստերը իմ բնակարանս տեղի կ'ունենային. անսայ թէ ժողովին մէջ Փորթութուզաւեան համոզուելու նշան ցոյց չի տար, զինքը առի առանձին սենեակ մը տարի, եւ սկսանք մտերմօրէն խօսիլ:

— Արարատեան ընկերութեան կրթական տեսուչը ըլլալով միթէ ես Հայ ըլլալէ կը դադրիմ, ըսաւ:

— Հայ ըլլալէ չես դադրիր, բայց Վանեցի չես ըլլար, պատասխանեցի:

Սկսաւ խնդալ, ուրեմն զինամափութեան յոյս կար: Երկարօրէն բացատրեցի այն բոլոր շարքները որոնք կրնային ծնիլ եթէ Արարատեանի կրթական տեսուչը Վասպուրականի առաջնորդական, երեսփոխանական, պարօցական եւ ուրիշ խնդիրներու միջամտէր: Հակառակորդ կուսակցութիւնը իր վրէժը լուծելու համար, ուղղակի դպրոցները պիտի հարուածէր, եւ ընկերութեան զէմ պաշտպանի անոր կործանումէն պիտի ակնկալէր Փորթութուզաւեանի չէզոքացումը: Մինչդեռ մենք լաւագոյն գործ մը բրած կ'ըլլայինք համբերատար աշխատութեամբ նոր սերունդ մը պատրաստել մեր գաղափարներովը, մեր սկզբունքներովը կրթուած, եւ այդ տեղացի սերունդը ինքն իր վրայ առնէր Վանի ամէն գործերուն հօլը, ինք բարենորոգէր իր երկիրը: Մէկ ժամուան մը տեսակցութեան մէջ Պ. Փորթութուզաւեան համոզուեցաւ փաստերուս, եւ որախ գուարթ գացինք. մեր ընկերներուն բոլոր սրտնք շատ

զոհ մնացին այս համաձայնութենէն:

Այս պատմութիւնը յիշատակեցի երկու նպատակաւ: Ընդհանրապէս այն կարծիքը կայ թէ Պ. Փորթութուզաւեան յամառ մէկն է: Յամառութիւնը յատկութիւն մը չէ, այլ տկարութեան մը, տղայամտութեան նշանը: Պ. Փորթութուզաւեանի հետ չորս տարի անընդհատ յարաբերութիւն ունեցած ըլլալով երբեք զինքը յամառ չեմ տեսած: Հաստատուն նկարագիրը պէտք չէ շփոթել յամառութեան հետ: Չորս տարուան անընդհատ փորձառութեամբ տեսայ թէ ինչ կարծիք ալ ունենար Պ. Փորթութուզաւեան, շատ անգամ փոխած է անոնք, երբ իրեն հակառակող պատճառաբանութեան մը լրջութիւնը ակնհաս տեսած է: Խոհական մտածող մը գտած եմ զինքը:

Այս պատմութիւնը նաեւ ցոյց կուտայ թէ մենք միշտ մտածած ենք Հայաստանի կեանքին ուղղակի չմիջամտել Պոլսէն: Նպաստել տեղացի բնիկ տարրին զարգացումին եւ յետոյ ձգել որ իրենք իրենց գործերը տեսնեն: Ո՛րքան տարբեր պիտի ըլլար մեր երկրին վիճակը եթէ զրուս գործող ամէն Հայ այս ուղղութեամբ շարժէր:

Պ. Փորթութուզաւեան երբ 1876ին առաջին անգամ Վան մտաւ դիշեր ատեն, ու շիտակ առաջնորդարանը գնաց, շատ զէշ ընդունելութեան հանդիպեցաւ, Պոլիս իբր հրապարակագիր խանակցած ըլլալով վանցիներու Պօղոսեան ու Ապօղոսեան կոիւնքուն: Ետքէն ալ հակառակորդ մը հանդիսացաւ առաջնորդական տեղապահ Երեմիա ձպիտիպոսին, որ բնականաբար հանդարտ չէր մնար: Հակառակ բոլոր խոհեմ միջոցներուն որպէս զի վանցիները ո՛ր է կուսակցական դժգոհութիւն չունենան ընկերութեան զէմ, միշտ արգելքները պակաս չեղան, որոնց յաղթելու համար շատ կորովի եւ շատ խոհեմութեան պէտք ունեցանք:

Պ. Փորթութուզաւեանի հետ մեր համաձայնութիւնը կատարեալ ըլլալով նորէն ճամբայ ելաւ դէպի Հայաստան, սակայն 1876էն ո՛րքան տարբեր պայմաններու մէջ: Ան ատեն յոյսն էր միայն իր ապաւենը, այժմ իրեն զօրավիւ սնէր ընկերութիւն մը զօր սիրով, յարգանքով կը շրջապատէին Ռուսիոյ եւ Թիւրքիոյ Հայերը ու ո՛ր է աջակցութիւն չէին զլանար անոր: Երկու տարուան յառաջվիմութիւնը շատ զգալի էր: Եւ հիմա մեզի կը մնար մեր վրայ զրուած յոյսերը չպատրել:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Փ Ո Ք Ր - Ա Ս Ի Ա

Գ

Մինչև վերջին մէկ քանի տարիներս, միակ մեծ պետութիւն մը կար որ իրական եւ կենսական շահ մը սնուր թիւրքիոյ բարեկեցութեանը եւ անկասկածեանը աշխատելու, եւ այդ պետութիւնը Անգլիան էր: Բայց վերջերս թիւրքիա նոր պաշտպան մը գտած է: Որչափ ատեն որ Պիզմարը վերին հսկողութիւնը սնուր գերմանական քաղաքականութեան վրայ, գերման ժողովրդին կը սորվեցնէին հաւատալ թէ ամբողջ Արեւելեան ինչպէրը «բոմբերանիացի կրքեատիէի մը ոսկորները» չ'արժեք: Բայց Պիզմարը հրաժարելովը, նոր եւ աւելի փառասէր քաղաքականութիւն մը սկսաւ: Գերմանիա թէ՛ քաղաքական եւ թէ՛ առեւտրական տեսակէտով տիեզերական երկիր մը եղած է, եւ վիլհելմ Բ կը փափաքէ որ գերմանական քաղաքականութիւնը ո՛չ միայն զուտ եւրոպական, հապա տիեզերական քաղաքականութիւն մը ըլլայ: Անցեալ աշնան Պաղեստինի շքեղօրէն կարգադրուած ճամբորդութեան պերճանքը եւ հանդիսութիւնը, Կ. Պոլսոյ զրկելու խառնամենքը, եւ Դամասկոսի ճառերը ուրիշ բան չէին բայց եթէ աշխարհի հրապարակաւ ազդարարութիւն մը թէ կայսրը որոշած էր իր պաշտպանութեան տակ առնել թիւրքիոյ սուլթանը: Դրան վրայ Գերմանիոյ քաղաքական ազդեցութիւնը աւելցնելու եւ թիւրքիոյ մէջ գերման վաճառականութիւնը առաջ տանելու ջանքերը՝ տարիներէ ի վեր է որ ի գործ կը զբաղին կորովով եւ յաջողութեամբ: Արդէն, թիւրքիան Գերմանիոյ ազդեցութեան շրջանակին մէջ առնելու գաղափարը նոր չէր: 1841ին արդէն, Գերմանիոյ միւլթենէն շատ առաջ, Մոլդըէ յօգուած մը հրատարակեց՝ Նաստապոլիով թիւրքիան իբր պաշտ մը գերման գաղթաւորման համար, եւ խորհուրդ տալով Գերմանիոյ քաղաքական հսկողութիւնը տարածել օսմանեան կայսրութեան վրայ: Այդ թուականին՝ գերման ըսելով Աւստրիան ալ մէջը կը հասկցուէր, այնպէս որ կը տեսնենք թէ Մոլդըէ ճշդիւ կանխատեսած չէ դէպքերուն արդի բերմունքները: Բայց գերման քաղաքագէտներու այն փառասէր խմբին կարծիքով, որոնց տեսութիւնները կը սլարգուին Համադերման ընկերակցութեան հրատարակութեանցը մէջ, ուշ կամ կանուխ Աւստրիա Գերմանիոյ հետ մէկ մարմին պիտի կազմէ, թէպէտ բաւորովին տարբեր կերպով մը: Համադերման ընկերակցութիւնը յանդիմանօրէն կ'ըսէ թէ պիտի դայ օր մը որ Գերման կայսրութիւնը Հոնոսի բերնէն պիտի տարածուի մինչև Պարսից Ծոցը: «Թիւրքիոյ ժառանգութեանն» Գերմանիոյ բաժինը» անուն գերմաներէն տետրակը՝ «Ասիական

Թիւրքիոյ սուլթանի կամ անուղղակի դրամուր» գրեթէ կատարուած լինեցած գործ մը կը նկատէ: Կրնանք մտաբերել թէ վիլհելմ Բ իր սրտին խորէն ինքն ալ համակարծիք է այդ երազատես ոգումներուն զորոնք անպատասխանաւ հրապարակագիրներ միայն կը համարձակին այդպէս բացէ ի բաց արայայտել, — սրովհետեւ, թէպէտ երազատես, բայց բաւորովին անհեթեթ չեն: Գերմանիա մը որ մինչև Ազրիական տարածուի եւ քաղաքական ու առեւտրական գերիշխանութիւն մը ի գործ գնէ Հունգարիոյ, Պալքանեան պետութեանց ու թիւրքիոյ մէջ, այնչափ հաւանական է որչափ շատ ուրիշ բաներ զորոնք քաններորդ դարը կրնայ բերել: Բայց Գերմանիոյ կայսեր տեսութիւնները ինչ ալ ըլլան հեռուոր ապագային մասին, իր արդի քաղաքականութիւնը զուտ գործնական է: Չենենք գործի մարդու ամէն միջոցներովը մեծ հրապարակ մը բանալու վրայ է գերման ճարտարագործութեան համար, եւ կ'աշխատի կար քիչ քիչ գերման քաղաքականութեան հսկողութեանը տակ առնել բանակ մը որ այսօր իսկ բնաւ զանցառելի քանակութիւն մը չէ, եւ որ կրնայ, գերման հրահանգութեան ներքեւ, ահեղ սպանալիք մը ըլլալ Ռուսիոյ կուշտին վրայ:

Գերմանիոյ շահերուն տեսակէտով, վիլհելմ Բի քաղաքականութիւնը սքանչելի քաղաքականութիւն մըն էր: Բայց կարելի չէ ծածկել թէ, գոնէ Անգլիոյ մէջ, ասիական մեծագէտ անժողովրդական բրաւ Գերմանիոյ կայսրը: Հայկական ջարդերուն շարունակութեանը ատեն իսկ բարեկամութեան եւ հոգածութեան ցայցերը՝ Մեծ Մարդասպանին համար, Յունաստանի նկատմամբ ցայց սուած անտեղի թշնամութիւնը, այնպիսի բաներ են որոնց Անգլիոյ հանրային կարծիքը զժուարաւ թէ ներէ: Միանգամայն, ամէն կարգի արտօնութիւններու համար գերման խնդրանքներուն առանց խղճահարութեան ոյժ տալը, եւ կայսեր անձնական ազդեցութիւնը ի գործ ածելով ազատ մրցումէ խուսափելը, երբեք չեն կրնար Անգլիոյ առեւտրական հասարակութեան հաւանութիւնը գտնել: Բայց այսու ամենայնիւ, գերման քաղաքականութիւնը՝ իր էութեամբը այնպիսի քաղաքականութիւն մըն է որ Անգլիոյ շահերուն հետ կատարելապէս հաշտ է: Իր բնականօր զժերուն մէջ, այդ քաղաքականութիւնը՝ թիւրքիոյ զօրացումը եւ առեւտրական զարգացումը ըսել է: Այս երկու բաներուն համար ալ, թիւրք վարչութեան բարեօրումը անհրաժեշտ է: Այդ նպատակին հասնելու համար, անպատճառ հարկ չէ որ ոյժ տրուի սուլթանին շարադրութեանցը. ժամանակին ընթացքին մէջ, կարելի չէ որ սուլթանին շարագործութեանցը դէմ չելլուի: Տարակոյս չկայ որ ցարչափ գերման ճարտարագործութիւնը տարածուի թիւրքիոյ մէջ, գերման կառավարութիւնը պիտի հարկադրուի իր կշիռը նետել օրէնքին ու բարեկարգութեան կողմը, յօգուտ նոյն իսկ խաղաղ ժողովրդին ապահովութեանը: Ու ասիկա որչափ աւելի տեղի ունենայ, անգլիական եւ գերման կառավարութեանց քաղաքականութիւնները այնչափ աւելի պիտի զուգադիպին: Երկուքն ալ պէտք է թիւրքիոյ

բարոյական ու նիւթական զարգացմանը բաղձան. երկու-
 քէն ոչ մին մտքէն կ'անցնէ, դո՛նէ առ այժմ, թիւրք կայս-
 րութիւնը կամ անոր ո եւ է մէկ խոշոր պատառը գրաւել:
 Ասիական թիւրքիան Գերմանիոյ եւ Հնդկաստանի մէջ
 տեղը կը գտնուի. անոր առեւտրական զարգացումը պէտք
 է երկու երկիրներուն ալ օգտակար ըլլայ. մինչեւ Պարսից
 Ծոցը երկաթուղի շինելու գերման ծրագիրը, յաջողելու
 համար, Հնդկաստանի վաճառականութեան վրայ դրած է
 յոյսը. իբր ղինստրական դաշնակից, Ասիական թիւր-
 քիան կրնայ հաւասարապէս օգտակար ըլլայ թէ՛ Հնդկաս-
 տանի եւ թէ՛ Գերմանիոյ: Ռուսական գրաւումը դո՛ները
 պիտի զօցէ թէ՛ անգլիական եւ թէ՛ գերման վաճառակա-
 նութեան առջև: Բայց Գերմանիա առեւտրապէս այնքան
 յետամնաց չէ որ յաջողելու համար այլամերձական քա-
 ղաքականութենէ մը կախում ունենայ: Տարակոյս
 չկայ թէ գերման կառավարութիւնը իր հպատակներուն
 ապրանքները առաջ կը քշէ եռանդով մը և յաջողութեամբ
 մը սրունք յոյժ վտանգաւոր են անգլիական շահերուն: Ա-
 տոր միակ պատասխանը սա է թէ անգլիական կառա-
 վարութիւնն ալ նոյնը ընելու է: Անգլիոյ արեւելեան վա-
 ճառականութեան անկման մասին նուազ տրտունջ պիտի
 ըլլայ, Գերմաններուն դէմ՝ նուազ սոճողութիւն, եթէ մեր
 Կ. Պոլսոյ դեպքանատունը այնքան աչքաբաց, այնքան
 զործօն եւ այնքան յամառ ըլլայ սրբան գերմանականը:

Բայց, ընդունելով որ շահերու քիչ շատ նոյնութիւն
 մը կայ Անգլիոյ եւ Գերմանիոյ միջեւ, հաւանական է սր
 երկու կառավարութիւնները զործնական համաձայնութեան
 մը դան սա կէտին վրայ թէ թիւրքիոյ վրայ ի՛նչ տեսակ
 ազդեցութիւն ի գործ դնելու է բարենորոգումներու մասին:
 Այդ հարցման կարելի չէ ուղղակի պատասխան մը տալ.
 Բայց կրնանք գիտել տալ թէ Փոքր-Ասիոյ եւ Միջագետքի
 մէջ գերման ազդեցութեան զարգացումը չի կրնար տեղի
 ունենալ Ռուսիոյ կամքին հակառակ — և այդ զարգացումը
 Ռուսիոյ կամքին հակառակ ըլլալու է — բացի եթէ Անգ-
 լիա իր զործօն աշակցութիւնը նուիրէ Գերմանիոյ: Ռ-
 ւստոր հակառակն ալ գրեթէ նոյնչափ ճշմարիտ է, այսինքն
 թէ թէպէտ չարժեք որ Անգլիա ինքը միայնակ Ռուսիոյ
 դէմ պատերազմի ելլէ թիւրքիոյ ասիական նահանգնե-
 րուն շահուն համար, միւս կողմէ կ'արժէ սակայն որ Գեր-
 մանիոյ հետ համաձայնի՝ Ռուսիան բացը թողլու համար:
 Քաղաքական սրոշ համաձայնութեան մը սերմերը կան
 այս հանգամանքներուն մէջ, զորոնք յառաջիկայ մէկ քա-
 նի տարիներուն դէպքերը թերեւս հասունցնեն:

Ուրիշ հարցում մը որ կը մնայ ընելիք, սա է թէ,
 հաշուի չաւնելով ուղղակի գրաւում մը, թիւրքիոյ մէջ
 ո եւ է բարենորոգում կարելի է: Եւրոպական թիւրքիոյ
 մէջ ո եւ է բարենորոգում կարելի չէ: Ասիական թիւր-
 քիոյ համար ալ յոյս չկայ որչափ ատեն որ այս վերջինին
 վրայ ծանրանայ Պալքաններուն երկար սահմանադուլը
 պաշտպանելու և ըմբոստ ազգաբնակչութիւն մը նուաճելու
 համար ապարդին կեպով ոգորելու անտանելի հոգը:
 Թիւրքիա վաղուց է սր մտած է այն անել շրջանակին մէջ

ուր ապահանութիւնը և վատթար վարչութիւնը աղքատու-
 թիւն առաջ կը բերեն, եւ աղքատութիւնն ալ իր կարգին
 բարենորոգման ո եւ է յոյս կ'արդիւլէ: Եթէ միայն կարելի
 ըլլար թիւրք սահմանադուլը ետ քաշել մինչեւ Մարիցա,
 թիւրքերուն ձեռքը ուրիշ բան չմտալով բայց եթէ Կ. Պո-
 լիսը, Էտիրնէն եւ Տարտանէլը, այն ահագին գումարները
 որոնք հիմա կը ծախսուին պաշտօնեաներու, զօրքերու եւ
 լրտեսներու համար, պիտի խնայուէին եւ պիտի կըր-
 նային կայսրութեան մնացեալ մասին բարուքմանը զոր-
 ծածուիլ: Նոյն իսկ եթէ ասիական պատահի, թիւրքիոյ հա-
 մար դժուար պիտի ըլլայ իր փրկութեան գործը կատարել
 միտ մինակը: Այսու հանդերձ, Դրան վրայ անընդհա-
 ուժով ճնշում բանեցնելով, վարչութեան մէջ շատ մը Եւ-
 րոպացիներ բարձր պաշտօններու վրաս անցընելով, եւ
 ընդհանրապէս զրամազուլը երկրին մէջ մտնելով եւ հազար-
 զակցութեան միջոցները զարգանալով, կարելի է որ իրա-
 կան եւ նոյն իսկ արագ յառաջգիւտութիւն մը կատարուի:
 Այսօր ամէնէն աւելի պէտք եղած փոփոխութիւնները
 վարչական են, եւ ոչ սահմանադրական: Օսմանեան օ-
 ղէնքը եւ օսմանեան սահմանադրութիւնը, եթէ միայն
 պարտաւատաշաճ կերպով ի գործ դրուին, լիւսլի կը բաւեն
 ժողովրդին արդի պէտքերուն: Բարենորոգումներուն ներ-
 մուծմանը համար ամէն բանէ առաջ էն էական բանն է
 կարող մարդիկ գնել պաշտօնեաներուն զուտը, և արմա-
 աէն բնաշինչ ընել զոգերու խմբակը օր կը ճարակի Երլ-
 արդի Քէօշիկին մէջ և որ իր ձեռքը առած է երկրին ամբողջ
 վարչութիւնը:

Ասիական թիւրքիոյ քաղաքական վերակազմութիւնը
 եւ անտեսական զարգացումը պէտք է մէկտեղ քալեն, ու
 ըովհետեւ մէկուն կարելիութիւնը միւսէն կախում ունի
 մեծապէս: Որչափ ատեն որ անիշխանութիւնը, վատթար
 վարչութիւնը եւ ապականութիւնը տիրեն այն տեղ, եւ
 րոպացի գրամատերը պիտի վարանի իր գրամը այնտեղ
 գործածելու — ու առանց եւրոպական գրամաղլխի՝ երկրին
 զարգացումը մտքէ անգամ անցընելու չէ: Եւ, փոխադար-
 ձարար, թիւրքիոյ քաղաքական բարեկարգումը մեծ մա-
 սամը կախում ունի հասոյթներուն աճումէն եւ աւելի քա-
 ղաքակիրթ կեանքի մը տարածումէն: Ճարտարագործա-
 կան երկու մեծ պետութիւններուն, Անգլիոյ և Գերմանիոյ
 դուս գործնական եւ եսասիրական շահը կը պահանջէ որ
 իրենց գործարանատէրներուն եւ ճարտարագէտներուն հա-
 մար տիրանալիք նոր դաշտ մը գտնեն, եւ իրենց պարտքն
 է պաշտպանել արդէն հաստատուած շահերը. ու այս եր-
 կու պատճառները մը բաւեն որ իրապէս զործնական ու
 յարատեւ միջոց մը գտնեն օսմանեան կառավարութիւնը
 բարեկարգելու: Որչափ ատեն որ Եւրոպայի նախան-
 ձութիւնները եւ սուլթանին անուանական անկախութիւնը
 շարունակեն, օսմանեան հպատակներու ի նպաստ միջա-
 մտութիւնը միշտ կատակերգութիւն մը պիտի ըլլայ, կամ
 թէ միջամտող պետութիւնը եւրոպական պատերազմի մը
 վտանգին պիտի մասնէ: Եւրոպական հպատակներուն
 գանգատները, եթէ շտկէ շիտակ գործածուին, և ոչ թէ

Դոնէն ուրիշ բաներ կորզելու ծառայեցուցուին, ինչպէս մէկ քանի պետութիւններ յաճախ կ'ընեն, — Էն ազգու միջոցը կրնան ըլլալ բարենորոգումները գործնական շաղին մէջ մտցնելու:

Հակառակ վերջին տարիներու գերմանական մրցման, հակառակ Դրան թշնամութեան, հակառակ անգլիական ձեռնբերեցութեան աշխարհի ուրիշ կողմերը դիմելուն, տալիսին էն խոշոր բաժինը ունինք ասիական թիւրքերոյ արտաքին վաճառականութեանը և նոյն իսկ երկրին ճարտարագործական ձեռնարկներուն մէջ: Բայց այդ վերքը կարելի չէ պահել, եթէ Անգլիոյ արտաքին գործերուն ախարարութիւնը մտքէն չհանէ սա կարծիքը թէ թիւրքերոյ պէս երկրի մը մէջ անգլիական ճարտարագործութիւնը կրնայ իր կուտանը պահել առանց պաշտօնական անգույ աշակցութեան: Այդ կարծիքով այնպէս կ'ենթադրուի թէ թիւրք կառավարութիւնը գիտէ իր շահերը և բանիմաց հետատեսութիւն մը ունի, — և իրողութիւնները ասոր հակառակը ցոյց կուտան: Երբոր սուլթանը անգլիական երկաթուղիի մը թող չի տար իր գիծը շարունակել, բայց հարիւր հազարաւոր ոսկի կը վճարէ մղոնին համար գերման ընկերութեան մը որ երկաթուղի մը շինէ նոյն ճամբուն վրայ, անշուշտ անտես կ'անէ իր շահերը, բայց աւելորդ է պնդելը թէ այդպիսի կառավարութեան մը ներքեւ ազատ մրցում կարելի է, մինչև որ մենք չպնդենք թէ պէտք է ազատ մրցում ըլլայ: Անգլիացի վաճառականը գերմարդկային կարողութիւն չունի որ կարենայ գերծ մնալ վաճառականութեան սովորական պայմաններէն: Երբ իր մթերանոցները կը թալլուին և իր պաշտօնեաները կը ջարդուին կոտորածի մէջ, իր շահերն ալ ո և է ուրիշ մահկանացուի մը շահերուն պէս կը փաստուին: Ասիական թիւրքերոյ մէջ մեր սեփական շահերուն պարտուպատշաճ պահպանումը և քաջալերը ո և է ուրիշ պետութեան հետ կոռուի բռնուի չպիտի տան մեզի, մանաւանդ Գերմանիոյ պէս պետութեան մը հետ, որ կատարելապէս կարող է մեզի հետ մրցել հաւասար պայմաններով:

Ո և է տարակոյտ չկայ Ասիական թիւրքերոյ զարգանալու էական կարողութեանը մասին: Փոքր-Ասիա, Սիւրիա և Միջագետք նոր ու չփորձուած երկիրներ չեն Սուտանի պէս, որուն ապագան բոլորովին անձանթ է: Այդ երկիրները զանազան շրջաններու մէջ, պատմութեան առաջին օրերէն մինչև միջին դարը, բնակավայրը եղած են բարդաւած քաղաքակրթութեանց: Կը բաւէ որ մարդման դայ փոքր-Ասիոյ կործանած քաղաքներուն մէջ, ըմբռնելու համար թէ ինչ խիտ բնակչութիւն մը կար տեսնօք այնպիսի տեղեր որոնք այսօր գրեթէ ամայի են, և ս'ըջափ հարուստ ու քաղաքասէր էին անցած գացած սերունդները, որոնց տեղը բռնած են այսօր աղքատացած զեղացիներ և գոյ պաշտօնեաներ: Թիւրք կայսրութեան ամէնէն հարուստ նահանգին՝ Այտընի՝ ամբողջ եկամուտը բաւական պիտի չըլլար Լաւողիկէի պէս քաղաք մը կառուցանելու: Բայց Ներսէս կայսեր օրով, երբ երկրաշարժ մը հիմնովին քանդեց քաղաքը, Լաւողիկէի բնակիչները

հպարտօրէն մերժեցին կայսեր առաջարկած զբաժանման օգնութիւնը, և իրենց քսակէն վերաշինեցին քաղաքը: Փոքր-Ասիոյ բնակիչները, որոնք այժմ իբր 10 միլիոն կը հաշուուին, առենօք առնուազն ասոր կրկնապատիկը կամ եռապատիկն էին: Միջագետքը, որ այսօր հազիւ մէկ ու կէս միլիոն բնակիչ ունի, 15 միլիոնէն պակաս ունենալու չէր: Եւ այդ ժողովուրդներուն բարեկեցութեանը ու ճոխութեանը, բարեւական կամ նոյն իսկ արաբական և թիւրքական Միջագետքի միջև, Հոռոմէական և թիւրքական փոքր-Ասիոյ միջև, ո և է բազմապատիկն կարելի չէ: Փոքր-Ասիոյ մշակելի հողին մէկ քառորդը իսկ չի մշակուիր այսօր: Միջագետքի մէջ, ուր մշակութիւնը ամբողջովին կախում ունի սոոյման ջրանցքներու պահպանումէն, անմշակ մնացած հողին համեմատութիւնը ալ աւելի մեծ ըլլալու է: Եւ սակայն հակառակ դարերէ ի վեր տեսող վատթար վարչութեան մը բերած աւերումներուն, փոքր-Ասիոյ շատ կողմերը տակաւին զարմանալի կերպով հարուստ են: Հարաւային Եւրոպայի մէջ զբնուար թէ զանուի տեղ մը որ կարենայ բազմապատիկ Մէանգրի հովտին (Այտըն), կամ Պրուսայէն Մարմարայի ծովը տարածուող երկրին:

Փոքր-Ասիոյ հանքային հարստութիւնը շատ մեծ է. սակայն, փոխադրութեան միջոցներու պակասութեան, կառավարութեան հանած ամէն կերպ դժուարութեանց և երկրին շատ մասերուն անապահովութեանը պատճառաւ, շատ քիչ բան եղած է արժէւորելու համար այդ հարստութիւնը: Պակտոլի ոսկեղէն աւազներէն շատ քիչ բան մը նացած է՝ յանկուցանելու համար շահագէտը, բայց արծաթ, կապար, պղինձ, երկաթ, քրոմ, քարածուխ, աղ, պղինձ, պորասիդ առատ են: Ամբողջ երկիրը ծածկուած է լեռնած հանքերով որոնք իրենց վրայ թափուած աշխատութեան փոխարէնը լիովին պիտի հատուցանէին աւելի նպաստաւոր պայմաններու մէջ: Իեռ շահագործուող հանքերուն մէկ մեծ մասը Անգլիացիներուն ձեռքն են, — ինչպէս Սոքիայի քարածուխի, կապարի և եւրոպի հանքերը՝ Մէանգրի հովտին մէջ. քրոմի հանքերը՝ Տօլման Չայի մօտ, Լիւկիոյ մէջ. Սուսուրլուի պորասիդի հանքերը, Պրուսայի մօտ. Լճեսիի արծաթախառն կապարի հանքերը Կիրասոնի մօտ. Կէմիսի անթիմուանի հանքերը, Էնտերլուսի մօտ: Արծաթ կը գտնուի Տէնէք Մատէնի, Էնկիւրիի և Եոզգատի միջև, Ազ Տաղ Մատէնի, Եոզգատի և Սըվազի միջև, երկու տեղերն ալ կապարի հետ խառն. թիրեպոլի, Տրապիզոնի մօտ. Մարգուանի շրջակայքը. Պուլղար Մատէն, Տաւրոս լեռան մէջ, Թարսուսի և Ուլու Գըշլայի միջև. Սպեր, Էրզրումի և Բաբերդի միջև, և այլուր: Տրապիզոնէն Բաբերդի ճամբուն վրայ Կիւմիշլիանէի արծաթի հանքերը հոչակուած են Մարքօ Բուլջէն, բայց, փոքր-Ասիոյ շատ հանքերուն նման, այժմ երեսի վրայ թողուած են: Նոյն իսկ անձնք որոնք կը բանին, շատ խեղճ ու կրակ կերպով կը շահագործուին: Չի հաշլեֆ 1887ին կը հաշուէր թէ թանկագին մետաղին սա նուազն հարիւրին 20ը կը կորսուէր: Պղինձ կը գտնուի

Ինկպուու, Տրապիզոնը բալորող լեռներուն մէջ, Սպեր են : Երկաթ տակաին կը բանին Սամսոնի մօտ, հին ատենուան Քալիբէս երկիրը, որ այնքան հռչակաւոր եղած է իր երկաթագործներովը : Քրոմի հանքեր կան Պէյճիք, Պրուսայէն Քէօթահայի ճամբուն վրայ : Այլ կը հանուի Չանդըրը, Քասթէմունիի հարաւային կողմը . աղը այդտեղ ձեռք կը բերուի Անատոլիի կեդրոնին Թուզկէօլ աղի մեծ ճախճախուտին կեդրոններուն վրայ շողիացումով : Քարածուխի ծանօթ մեծագոյն հանքն է Էրէյլիինը, հիւսիսային կողմը, իբր 30 մղոն երկայնութեամբ եւ 9 մղոն լայնութեամբ : Խրիմի պատերազմին ատեն այդ հանքերը բանեցուցին՝ հանքածուխ հայթայթելու համար գաշնակից նաւատորմներուն, բայց անկից ի վեր մեծ բան մը եղած չէ ընդարձակօրէն շահագործելու համար այդ հանքերը : Աւելի փոքր հանքեր կը գտնուին նաեւ Ինկպուուի մօտ եւ Ամսուրա, նոյն գաւառին մէջ : Քարածուխ կը գտնուի նաեւ Մէրտինի մօտ, Մուսուլէն Տիարպէքիի ճամբուն վրայ, եւ հաւանօրէն ուրիշ գանազան տեղուանք ալ, ինչպէս Անդի-Տարսուսի մէջ, Վանի լճին արեւելեան կողմը, եւն :

Վ Ե Ր Ջ

ՎՏԱՆԳԻ ՄԸ ՀԱՅ ՎԱՃՎՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կ. Պոլսոյ անգլիական գեր-հիւպատոս Պ. Սարէլ իր կառավարութեան խրկած է Կ. Պոլսոյ 1893-97ի առեւտրական կացութեան վրայ ընդարձակ տեղեկագիր մը որ ըստ զրինի Խորհրդարանին ներկայացուցեցաւ : Այս տեղեկագրէն հետեւեալ ուշագրաւ մասը կը քաղենք .



«Արեւելեան ընկերութեան» 1825 ին լուծուելէն ի վեր Թիւրքիա ներածուած անգլիական ապրանքներուն վաճառականութիւնը կամաց կամաց կերպարանափոխութեան ենթարկուեցաւ, մինչեւ որ այս պահուս գրեթէ ամբողջ օտարազգիներու ձեռքը անցած է : Թիւրքիա գտնուող անգլիացի վաճառականներն էին միայն որ սկիզբները բրիտանական ապրանքները կը ներմուծէին . ու այդ վաճառականներն ալ անգլիական տուներու ընկեր էին կամ անոնց հետ ուղղակի յարաբերութեան մէջ :

Ճամանակին յառաջանալովը Հայեր եւ Յոյներ որոնք թերեւս այս տեղի անգլիացի վաճառականներուն կը ծառայէին, ձեռք անցուցին անգլիական տուներու գործակալութիւնը, եւ իրենց նախկին տէրերուն հետ ուղղակի մըրցումի ելան : Յետոյ, իրենք ալ Անգլիա հաստատուելու կամ հոն փոխանակ անգլիացի թղթակիցներու իրենց ազգին պատկանող գործակալներ ունենալու գաղափարը

յղացան, և հիմակ հոս տեղացի տուներէն շատերը Անգլի լիոյ հայ կամ յոյն տուներուն ներկայացուցիչներն են, կամ հոն նոյն ազգէն ներկայացուցիչներն են, մինչդեռ ներմուծող անգլիացի վաճառականները գրեթէ ամբողջապէս աներեւութացած են : Հետեւանքը շատ վնասակար եղաւ անգլիական վաճառականութեան : Տեղացի պլտիկ ներմուծողները իրարու բերնէ հացը խլելու համար մրցումի ելլելով, ամէն բան աժանութեան զոհեցին, որով ապրանքներուն տեսակը աւրուեցաւ, ու օտարազգի գործարանատէրերն ալ կըրցան ոտքերնուն տեղ մը ընել, ուսկից զիրենք խախտելը այլ եւս անկարելի եղաւ : Անգլիական գործարաններուն ասկէ առաջ եկած վնասին որչափութեանը հնարաւոր չէ ամբողջապէս գին մը կտրել : Ու այս պատճառներուն իբր անուղղակի հետեւանքը եղած է Կ. Պոլսոյ անգլիական հասարակութեան շարունակաբար նուազումը . մինչդեռ այսպիսի կարեւոր քաղցի մը մէջ, ուր հակառակ ձախորդ ազդեցութեանց անգլիական ապրանքները արժէքի կողմէն միշտ կը հաւատարին, կամ գրեթէ կը հաւատարին միւս ազգերուն ներածութեանցը՝ ամենքը մէկտեղ առած, բրիտանական գաղթականութիւնը աւելի փոքրաթիւ է և նուազ բարգաւաճ քան աւստրիական, ֆրանսական, գերմանական կամ իտալական գաղթականութիւններէն մէկը : Այս պարագան բնականաբար աննպաստ ներգործութիւն կ'ունենայ անգլիական վաճառականութեան վրայ :

Տեղացիները անգլիական ապրանքներու ներածման վաճառականութիւնը ձեռք անցընելով, եւ անգլիացի ներածողները աներեւութանալով, ուրիշ շարիք մըն ալ առաջ եկած է . անգլիական գործարանատէրերը և վաճառականները այս հրապարակին վրայէն իրենց վստահութիւնը բացարձակապէս վերցուցին, ու Թիւրքիոյ հետ գործ ընելու չկամութիւնը այս անվստահութեան հետեւանքը եղաւ : Այս պարագան մասնաւորապէս կը պատկանի Կ. Պոլսոյ, ուր անգլիական տուներ ծանրապէս բռնուած գտնուեցան իրենց թղթակիցներու սնանկութեանը մէջ :

Թէ՛ այս տեղի անգլիացի վաճառական հասարակութեան եւ թէ՛ անգլիական վաճառականութեան շատ նպաստաւոր պիտի ըլլար եթէ վաճառականները եւ գործարանները նախապատուութիւն տային արդէն Թիւրքիա հաստատուած Անգլիացիներուն, և քաջալերէին ուրիշները որ իրենք ալ գան հաստատուին ու ձեռք անցընեն բրիտանական տուներու գործակալութիւնը : Անվերջանալի կնճռատութիւններ կը ծագին օտարներ եւ մասնաւորապէս օսմանցի հպատակներ գործածելէ : Եթէ անգլիացի հպատակներ գործածուին, հաւանօրէն նուազ զուարուութիւններ առաջ կուգան, ու ամէն պարագայի մէջ հակառակ կողմերը կրնան զիմել բրիտանական գատարանի մը, իբր վերջին ձեռնհաս մարմին, եւ անոր միջոցաւ կարգադրել իրենց վէճերը :

Հիմա անգլիացի տուներուն սովորական գարձած է առեւտրական յարաբերութեան մտնել՝ իրենց թղթակիցներուն վիճակին վրայ առանց ո՛ր եւ է պիտութեան, ու ետ

բէն ալ հիւպատոսին դիմել որ օգնէ զրաճնուն գանձումին, կամ ազատէ զիրենց ամէն տեսակ դժուարութիւններէ որ կրնան ծագած ըլլալ: Այս գրութիւնը միօրինակ կերպով շատ անգոհացուցիչ արդիւնքներ կ'ունենայ, եւ ինչ որ ալ ըլլայ պէտք է ասոր առջեւ առնել:

Թիւրքիոյ մէջ հիւպատոսական պաշտօնեայ մը այս տեսակ պարագաներու համար վարուելու ուրիշ կանոն չունի բայց եթէ յանգիլ ո՛ր եւ է կարգադրութեան մը որ, ընդհանուր կերպով, բրիտանական տունը զբաժանական կորուստի կ'ենթարկէ: Օրինական միջոցներու դիմում մտքէ անցընելու չէ, վասն զի առնելիքի անսովոր կարգադրութեանը համար ըլլալիք ծախքը կորսուած զբաժին գումարը կը գերազանցէ: Ու միեւնոյն ատեն, այսպիսի կորուստներու շարունակ կրկնութիւնը բնականաբար վաճառականութիւնը վհատեցնելու կը ծառայէ:

Եթէ Արեւելքի մէջ բրիտանական վաճառականութեան գերիշխանութիւնը վերակենդանացնել կ'ուզուի, ուշադրութեան առնուելիք մասնաւոր կէտն է անգլիական տուներու ներկայացուցչի խնդիրը: Անգլիոյ վաճառականները եւ գործարանատէրերը պէտք է քաջալիրեն թիւրքիա վաճառականութիւն ընող անգլիական հպատակները:

Պէտք չէ սպասել որ մեր վաճառականութիւնը ծաղկի եւ կամ իր հիմակուան զիրքը պահէ երբ մեր գաղութը այս ինկած վիճակին մէջն է, եւ մեր վաճառականութիւնը կը մնայ տեղացիներուն ձեռքը որոնց մէթոսներուն համար «Լէվանթէն» անունը առած մը գարձած է: Շատ օգտակար պիտի ըլլայ եթէ այս մարդոց տեղ ձեռներէց երիտասարդ Անգլիացիները գրուին: Չեն պակսիր այնպիսի մարդեր որոնք արդէն այս երկիրը հաստատուած են եւ որոնց ծառայութեան օգուտ կրնայ քաղուիլ, եւ շատ ուրիշներ ալ հոս պիտի հաստատուէին եթէ անգլիացի արտածող վաճառականները անոնց օգնէին: Այս երկրին մեր գաղթականներուն մէջ նոր կեանքի մը ներմուծումը պիտի օգնէ մեր վաճառականութեան վերակենդանացումին:

Տեղին վրայ եղող գործարանատէրներու եւ վաճառականներու գործունէութեանը ու պարկեշտութեան տեղը ո՛չ կառավարական պաշտպանութիւն ո՛չ ալ ո՛ր եւ է պաշտօնական պաշտպանութիւն կրնան բռնել: Ասոնք իրենց այդ յատկութեանցը շնորհիւ կարող են չէզոքացնել այն հակառակ ազդեցութիւնները որոնք քաղաքական պահանջումներէ ժամանակ առ ժամանակ կրնան առաջ գալ անգլիական վաճառականութեան դէմ:

Ամէն պարագայի մէջ, եթէ մեր արտածումի վաճառականութիւնը անգլիական ձեռքերու անցնի, հիմակուրէն շատ աւելի ընդարձակօրէն պիտի տարածուի. եւ տարածուած չըլլալուն պատճառը պէտք չէ վերագրել քաղաքական կացութեան: Անգլիական ապրանքները, մասնաւորապէս բամբակեղէնները, թիւրքիա մտցնող վաճառականներուն շատը — հաւանօրէն մեծամասնութիւնը — Հայ են, եւ ասոնք գոնէ թիւրքիոյ մէջ չեն վայելել քաղաքական այնպիսի առաւելութիւններ որոնց մասնակցելու կարող չըլլան անգլիական հպատակները:»

Այս տեղեկութիւնները թէն զուտ վաճառական շրջանակներու կը վերաբերին բայց անոնց հրատարակութիւնը կարեւոր սեպեցինք: Որչափ հնար է ճշգրիտ գաղափար պէտք է կազմել Եւրոպացիներուն թիւրք պետութեան եւ մասնաւորապէս Հայոց նկատմամբ քաղաքական, կրօնական, առեւտրական դիտումներուն մասին:

Այն փաստերը որոնց յենելով Պ. Սարէլ կը ջանայ թիւրքիոյ բնիկները զրկել անգլիական վաճառականութեան միջնորդի դերէն, շատ տկար են: Եթէ Անգլիոյ վաճառականներն ու գործարանատէրերը եթեմասուն տարի է պէտք չեն զգացած թիւրքիոյ հետ իրենց առեւտրական գործողութիւնները միմիայն Անգլիացիներու միջոցաւ ընելու, անշուշտ իրենց շահերուն աւելի նպաստաւոր գտած են Հայոց եւ Յունաց առեւտրական միջնորդութիւնը: Թիւրքիոյ նման երկրի մը մէջ եթէ վաճառականութիւնը հեշտին գործ ըլլար, բազմաթիւ Անգլիացիներ Արեւելքին երու հետ մրցել պիտի փութային: Եւ եթէ անգլիական վաճառականութիւնը թիւրքիոյ մէջ քառանկններու վրայ չ'ընթանար, չարիքին պատճառները ոչ թէ վաճառականներու եւ յանձնակատարներու ազգայնութեանը մէջ փնտռելու է, այլ երկրին քաղաքական եւ անոր հետեւանք անտեսական ընդհանուր պայմաններուն մէջ:

Կ. Պոլսոյ անգլիական հիւպատոսարանին գանգատներուն մէկ մասը Ֆրանսացիներէն ալ արդէն լսուած են, բայց ասոնք չարիքին իսկական պատճառը մատնանիշ կ'ընեն: Գերման վաճառականութեան հետ ֆրանսական նին մրցումը շատ դժուարացած կը համարին, զխաւորապէս Գերմանացիներուն ստորին տեսակէն, բայց աժան, ապրանք ծախելու մէթոսին հետեւանքով: Թիւրքիոյ ժողովուրդը ընդհանուր կերպով աղքատ է, ուստի եւ չի կրնար գնել լաւ ապրանքը որ սուղ է, եւ Ֆրանսացիները որ աղէկ ապրանք ունին ետ կը մնան խարդախող Գերմանացիներէն: Կէս դարէ ի վեր թիւրքիա օրէ օր քաղաքականապէս իյնալու հետեւաբար եւ աղքատանալու վրայ է, ու տեղացի վաճառականները այն տեսակ ապրանքներ կրնային մեծաքանակ ներմուծել զոր վաճառելու կարող պիտի ըլլային:

Տեղեկագիրը կը ծանրանայ թիւրքիացի վաճառականներու եւ անգլիացի գործարանատէրերու ու վաճառականներու միջեւ ծագած դժուարութիւնները լուծելու պարագաներուն վրայ: Պ. Սարէլ կը կարծէ որ երբ երկու կողմն ալ անգլիացի ըլլան, դժուարութիւնները անգլիական դատարաններով դիւրութեամբ կը հարթուին: Եւ սակայն ուղղակի Անգլիոյ հետ գործ ընող հայ կամ յոյն վաճառականը իր յօժար կամքով չէ որ դժուարութիւններ կ'ունենայ: Տեղացի վաճառականը ինքն ալ իր կարգին ուրիշ պզտիկ վաճառողներու և խանութպաններու վարկ կը բանայ, և անոնցմէ ծագած դժուարութիւններէն է որ ինքն ալ կը նեղուի: Անգլիացին ալ այդ դժուարութեանց պիտի բախի, եւ անշուշտ աւելի ծանր կերպով, եւ պիտի չկրնայ անգլիական դատարաններու դիմել անոնց դէմ. ուստի իր անգլիացի թղթակցին կամ գործարանատիրոջ հանդէպ



ծանր վիճակի մէջ պիտի գտնուի: Ու եթէ ո՛ր եւ է վարկ չբանայ մանրավաճառներու, գործ ալ չի կրնար տեսնել:

Տեղեկագիրը կը խօսի Անգլիոյ վաճառականներուն թիրաքիոյ սնանկութիւններէն կրած փաստներուն վրայ, բայց թուանշանները կը պակսին: Այս մասին որոշ վիճակագրութիւն չունինք, բայց գիտենք թէ կէս դարէ ի վեր Անգլիոյ հետ գործ ընող հայ տունները կը շարունակեն կանգուն մնալ: Վճարումներու գաղարում ընող տունները շատ քիչ եղած են, ու մանաւանդ նենգաւոր սնանկացողներ, եթէ եղան, հազուադէպ բացառութիւններ կը համարուին: Թիրաքիայէն այլապէս կանոնաւոր երկիրներու մէջ անպակաս են սնանկութիւնները: Եւ Պոլսի ալ Հանս սանի պէս տուն մը կը սնանկանար, ու Հանսոն անգլիացի էր եւ մեծ վարկ կը վայելէր: Հրաշքի պէս բան մըն է որ թիրաքիոյ պէս յուզեալ, տակնուվրայ, անկարգ անկանոն, անխիտանութեան մատնուած երկրի մը մէջ Հայերը եւ Յոյները կարող կ'ըլլան իրենց գործերը շարունակել առանց մեծամեծ սնանկութիւններու:

Հայերը իրենց առեւտրական միջնորդութենէն զրկելու համար Պ. Սարգիսի փաստերը որքան որ ալ տկար ըլլան բայց եւ այնպէս կրնան անգլիական մտքերու վրայ ազդել, ու Եւրոպայի առեւտրական ընդհանուր հրապարակներուն վրայ Հայոց վաճառականութեան աննպաստ հոսանք մը առաջ բերել, ու չենք գիտեր թէ Անգլիա ընտելող հայ վաճառականները այս տեսակ հրատարակութեան մը ազդեցութիւնը բեկանելու համար իրենք ալ ի՞նչ տեսակ հրատարակութեանց զիմած են:

ՀԱՅԱՍՏԷՐ ԿՆՈՉ ՄԸ ՄԱՀԸ

Օրիորդ Ֆրէզըրը ճանչցող հազարաւոր Հայեր խորին վշտով պիտի իմանան ազնուասիրտ հայասէր օրիորդին մահուան լուրը: Օրիորդ Ֆրէզըր ծնած էր Գանատայի մէջ 1867ին, եւ 1892 նոյեմբերին Վանի ամերիկեան միախոնարութեան միացաւ: 1895ի սրտածմլիկ գէպքերուն ստեղծ հոն էր, ոգի ի բոլին աշխատելով միախոնարական եւ նպաստի զործին մէջ, մինչեւ որ հարկ դատուեցաւ միսիոնարութեան կիները Վանէն հեռացնել: Պոլսի հասնելուն, օրիորդ Ֆրէզըր, Բրոֆ. Բէնտէլ Հարիսի եւ ուրիշ բարեկամներու խորհրդով, յանձն առաւ շարդերէն յետոյ Պոլսի կարիա փախած հայ գաղթականներուն նպաստի գործին տեսչութիւնը: Ուստի Վաննա գնաց, ուր հազարաւոր գաղթականներ խոնուած էին, եւ ուր նպաստի զործը անկերպարան վիճակ մը ունէր: Օրիորդը նշանաւոր կերպով մը կազմակերպեց ատիկա: Անգլիայէն բարեկամներ, եւ մասնաւորապէս Ուէսթմինսթրի զուքսին յանձնաժողովը, 10,000 ոսկիի չափ գումար մը զրին անոր տրամադրութեան ներքեւ: Օրիորդ Ֆրէզըր հիւանդանոց մը բացաւ, եւ ձեռնարկեց զանազան արհեստներու օրոնցմով զաղ-

թականները կարենային ապրուստնին հարկէ: Ատեն եղաւ որ մի միայն Վանուայի մէջ 6000 հոգի իրեն կը նպլէին, եւ բազմաթիւ ուրիշ գաղթականներ ալ ուրիշ քաղաքներու մէջ: Մէկ քանի Անգլիացիներ օրոնք ականատես եղած էին այդ գործին մէջ ցոյց տուած արութեանը եւ կորովին տաք սքանչացումով զրեցին իր բանիմացութեանը եւ գատողութեան մասին, զարմանալով թէ ի՞նչպէս այդքան ուժ ունէր այդպիսի ընդարձակ գործ մը վարելու: Աւագ, պէտք եղած ուժը չունէր, եւ 1897 սեպտեմբերին ստիպուեցաւ Ամերիկա դառնալ: Վանէն Վիկնամ ատենը, ունեւոր մարդերու վտուած մը թէյի արծաթէ սպաս մը նւիրեց իրեն, իբր երախտագիտութեան նշան մը՝ իր նշանաւոր ծառայութեանցը համարձ եւ կ. Պոլսոյ Հայոց պատրիարքը շնորհակալութեան նամակ մը զրկեց իրեն՝ իր օրհնութիւններովը: Կը յուսացուէր թէ օրիորդ Ֆրէզըր իր առողջութիւնը պիտի գտնէր եւ Վան վերադառնար այս աշխան: Բայց զմբազուրբար, ահա Վահը վրայ հասաւ անակնկալ կերպով, յունիս 7ին, Պոսղոնի Գարնի հիւանդանոցին մէջ, վերջ գնելով կեանքի մը որ խեղճերուն օգտին նուիրուած էր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Կ. Պոլսէն կը գրեն մեզ յուլիս 6 թուականով. «Անատոլիէն գէշ լուրերը կը շարունակեն: Սըվազէն կ'իմացնեն թէ Ուզուն-Բէօփրիւ գաւառակը պաշարուած է պաշարպօզուքներու հրոսներէ, որոնք իբր թէ միսիւմանի մը ծայրատուած զիակը գտեր են, և թէ շատ ծանր անկարգութեանց վախ կայ: «Միւս կողմէ, Պայագիտի մօտ, Սպարտանոս ճշմարիտ կոտորած մը տեղի ունեցեր է: Հինգ հարիւր Հայ կնիկով զաւակով հանդարտօրէն թիրաքիա կը դառնային Կովկասէն: Ռուսական սահմանազուխը հազիւ թէ անցած էին, երբոր թիրաք զօրքերը վրանին յարձակեր եւ սկսեր են շարք տալ, այնպէս որ խեղճերէն շատ քիչներ կրցեր են նորէն ռուսական սահմանազուխը անցնիլ:»

ԿԻԼԻԿԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ. — Վերջերս Փայասի հայ զիւղերը տեւրեքերու հաւաքման առիթով նորանոր հարստահարութիւններու ենթարկուեցան: Թէեւ սուլթանին իրատեւով հին տուրքերը իբրեւ թէ շնորհուած էին եւ այս «կայսերական շնորհ»ին համար ալ գաւառները զոհարանական աղօթքներ կարդացուեցան բոլոր եկեղեցիներուն մէջ, եւ սակայն հին տուրքերը նոյն խի աւելի խնտութեամբ կը գանձուին քան թէ նորերը:

Հալէպի զօրքերուն ամսաթոշակները Փայասի կտտավարչական սնտուկէն վճարել որոշուած ըլլալով, հանրա-

ծանօթ Ալի փաշան միւլազիմ մը կը խրկէ Փայաս դրամ պահանջելու. միւլազիմը Փայաս հասնելով կառավարութեան անտուկը պատարկ կը գտնէ: Ալի փաշայի պատուիրակը ուրիշ միջոց չի գտներ անտուկը լեցնելու բայց եթէ շրջակայ հայ գիւղերուն վրայ յարձակել, գեղերուն երեւելինքը եւ հասարակ գեղացիները անխնայ ծեծել, ազգերնուն կրօնքնուն հայհոյելով: Ծեծի սովորական եղանակին մէջ այս անգամ կարեւոր փոփոխութիւն մը ներմուծելու պէտք կը տեսնուի, անտարակոյս պատիժը աւելի ազդու ընելու համար: Գեղացիներուն գլուխները ոտքերնուն մէջ անցընելով լաւ մը կը կապեն, ապրանքի հակերու պէս, եւ յետոյ կը սկսին վրանին անընդհատ ջուր լեցնել, մինչդեռ ուրիշներ կը սկսին անխնայ յարազանել այլ խեղճերը: Գեղացիներէն շատերը մինչեւ այսօր անկողնոյ կը ծառայեն յուսահատական վիճակի մէջ:

Միւլազիմին կ'ընկերանար թահսիլտար զինուոր մը որ կ'երեւայ թէ իր պետին խոստովանները բաւական չհամարելով Օճաղը գիւղէն Ղապթուր Օղլու Գրիգորը վեցհարուստներով մը ծանրապէս կը վիրաւորէ: Վիրաւորեալը փոխադրուեցաւ Չորքարզուան սւր, պանդոկի մը մէջ, թողապետական բժշկին ձեռքով կը զարմանուի:

Թահսիլտար զինուորը ո՛չ միայն ո՛ր է հարցաքննութեան չէ ենթարկուած, այլ փնտրածէն՝ մեկնելով Հալպ վերադարձած է եւ հիմա պաշտօն ունի նահանգին միւս շրջանակներուն տուրքերը հաւաքելուն: Գեղացիները այս դէպքին վրայ Փայասի գայմազամին բողոքեցին. գայմազամը պատասխանեց թէ ինքը այդ տեսակ խնդիրներու չի կրնար միջամտել...:

— Օճաղըն Մինաս Պալեան անունով հայը վիրաւորող շորթ թիւրքերը, որոնք Հայերուն բուն բողոքներուն հետեւանքով ձերբակալուած էին, այս օրերս ազատ արձակուած են քառասուն ոսկի փրկանք տալով:

Կ. Պոլսէն կը գրեն Տէչլի Նիռզի:

« Զրոյց կը պտրտի թէ Ռուսիա որչա՞ծ է պնդել որ միջոցներ ձեռք բանալէ՛ն՝ հայ ժողովուրդը ապահովելու համար ֆիւրտերուն յարձակումներէն: Եթէ զրոյցը ճշմարիտ է, լաւ լուր մըն է ասիկա, որովհետեւ մինչդեռ վանի շրջակայքէն անուսած լուրերը կ'իմացնեն թէ թըշուառութիւնը նուազած է, փոքր-Ասիոյ միւս կողմերէն եւ մասնաւորապէս Ռուսիոյ ոսկմանակից նահանգներէն եկած լուրերը չափէն աւելի սթրտածովի են: Ինչի կը հաւատտին թէ պատրիարքը յուսահատած է ո եւ է պաշտպանութիւն ձեռք բերելէ, ու հրամարելու խօսք կ'ընէ:

« Նոյն իսկ մայրաքաղաքին մէջ ու շրջակայքը, ամէն կերպ արտառոց սեղմումներ ի գործ կը զրուին նոյն իսկ ծանօթ ու յարգելի Հայերու երթեւեկին մասին, որոնք միանգամայն թող չի տրուի մայրաքաղաք գալ: Բացի այդ մարդոց եղած յանդիմանումներէն, այդ սեղմումները վնաս կը հասցնեն Եւրոպացիներուն գործերուն: Անհատական անիրաւութեան ու խոշտանգումները պատմութիւնները ան-

համար են, բայց ոչ մէկ պետութիւն կրնայ միջամտել յաջողելու յոյսով, բացի Ռուսիայէն: »

Բիւզըրի Կ. Պոլսոյ թղթակիցը կը գրէ յուլիս 13 թըւականով:

« Թիւրքիոյ մէջ քաղաքական կացութիւնը շատ քիչ անգամ այսքան անշարժ եղած էր այսչափ երկար տուն որքան վերջին մէկ քանի ամիսները: Ի՛նչ պատճառի արդիւնք ըլլայ այս անշարժութիւնը — սմանք Հա Հէյի Խաղաղութեան Համաժողովին կը վերագրեն ասիկա, — սա ստոյգ է որ թիւրք կառավարութիւնը վերջերս լըջօրէն ջանահնար եղաւ արդիւնելու համար պատահուած այնպիսի միջադէպներու որոնք պետութեանց կողմէ դիտողութիւն առաջ կը բերին: Այսպէս բացի մէկ քանի սպաննութիւններէ եւ թաշանէ Մուշի շրջակայքը, եւ երեք զեղի քանդուէն, որ հետեւանք էր վանի նահանգին մէջ երկու քիւրտ ցեղերու միջեւ ծագած կռուին, փոքր-Ասիոյ կացութիւնը անվրպով մնաց: Մակեդոնիոյ մէջ, հակառակ ինչ ինչ թերթերու եղբրական գուշակութեանցը, հանդարտ վիճակ մը կը տիրէ: Ալպանիացիներուն Սերպիայէն ներս մտնելը՝ պատահած էն կարեւոր դէպքն է վերջերս, բայց ասիկա ո եւ է ծանր հետեւանք չունեցաւ, երկու կողմէն փոխադարձաբար ցոյց տրուած վարսողութեան շնորհիւ՝ կեցնութիւնը նակայն բարուցած չէ այս հանգարտութեան շրջանին մէջ: Հայերուն հարստահարուած անխափան կը շարունակէ, եւ ներսերէն անուսած վերջին լուրերուն նայելով, Հայերը մեծապէս կը նեղուին հարկահաւաքներէն, որոնք երբեմն բարբարոս միջոցներ ի գործ կը գնեն տուրքերը կորցելու համար: Միակ խրնդիրը որ վերջերս բանակցութեան նիւթ եղած է, կովկասի հայ գաղթականներուն դարձի խնդիրն է: Ռուսիա հիմակ քիչ շատ փոխած է իր առջի պահանջուածը: Գաղթականներուն դարձին դէմ սուլթանին անտեղիտալի ընդդիմութեան վրայ, ռուս կառավարութիւնը հիմակ կ'առաջարկէ Հայերը մաս առ մաս ետ դարձնել մէկ քանի տարուան մէջ: Բայց սուլթանը այս ծրագիրն իսկ չ'ընդունիր, ու հակառակ է ո եւ է առաջարկութեան որ գաղթականներուն դարձին կը վերաբերի: Սուլթանը այնքան կ'ըղձայ այդ գաղթականները երկրէն դուրս պահել, որ առաջարկեց ընտանիք գլուխ 10 օսմ. ոսկի նուերել եթէ ռուս կառավարութիւնը անոնց թոյլատրէր Ռուսիոյ մէջ տեղաւորուիլ: Ասիկա շատ առատաձեռն առաջարկ մը չէ, երբ մշտն քի առջեւ բերենք թէ կովկասի հայ ընտանիքները միջին հաշուով ութ հոգիէ կը բաղկանան: Աւելորդ է ըսել թէ ռուս կառավարութիւնը կը մերժէ նկատողութեան անոնց այս առաջարկը: »

Այս գաղթականներուն խնդիրը ծանր ու տխուր բան մըն է: Կ. Պոլսոյ ուսական պետանր, Պ. Զինովիկ, կը պնդէ անոնց դարձին վրայ, ու սուլթանը այդ դարձին խօսքը իսկ վտիկ ընել չ'ուզեր: Իսկ բոնի դարձը այդ խեղճերուն ստոյգ ու սկիներեւ մահն է, ինչպէս քիչ մը

վերը տեսանք: Սուլթանը ոչ մէկ ոճրի առջեւ պիտի ըն-
կերկի համոզելու ամբողջ աշխարհը թէ այդ Հայերը կը-
րեալ ճամբելէ ուրիշ ճար չկայ: Թայեզկին մէկ հեռագրին
նայելով սակայն, լուրը շատ մեծ տագնաութեամբ ընդուն-
ուեր է թէ՛ կրեալ եւ թէ՛ Յունաստան, ու կրեալները
ընաւ պիտի չյօժարին իրենց զոները բանալու Հայերուն
առջեւ: Իրենց փափաքն է կրեալէն մեկնող իսլամներուն
տեղ իտալացի գաղթականներ հրաւիրել: — «Աղուէները
որջեր ունին, ու երկնից թռչունները բոյներ. բայց... հայ
գաղթականը տեղ մը չունի, որ հոն իր գլուխը դնէ:»

ՃԱՄԱՆՑ

ԱՊԱԳԱՅ ԿԵԱՆՔԸ

ՊԱՐՏՈՒԹԻՒՆ, ՄԸ

Իրօշակի բանի մը հին թիւերը այս օրերս աչքէ ան-
ցրնելու առիթը «նենալով», «շարութիւնս գրաւեցին
1896 օգոստոս 14 26ի պատահարին առթիւ յայտնուած
համոզումները որոնք մտաւորապէս հետեւեալ կերպով
կ'ամփոփին.

«Օգոստոս 14 26ի պատմական օրը Կ. Պոլսում
6000 Հայ ջարդվեց: Յաղթեցինք:

«Օգոստոս 14 26ի պատմական օրը Կ. Պոլսում հայ
բուրժուաները կործանվեցան: Յաղթեցինք:

«Օգոստոս 14 26ի պատմական օրը Կ. Պոլսից բռն-
բռն Հայերը իրանց սիրած վտփորից բռնեցան: Յաղ-
թեցինք:

«Օգոստոս 14 26ի պատմական օրը Դաշակցու-
թեանս յաջողվեց վեց զեսպաններին մի մեծօրանտով
տալ: Յաղթեցինք:

Այս ամէնը կարգալէ յետոյ, կրկնատեսութեան յան-
կարծածին տուրքով խորատուգուեցայ ապագային մէջ, ու
ինչ որ տեսայ կը ներկայացնեմ:



Հայաստանի բարեկարգութեանց խնդիրը 20րդ դա-
րուն առաջին քառորդին դեռ լուծուած չըլլալով, Կ. Պոլ-
սոյ նոր սերունդ Դաշակցականները որոշեցին վճռական
հարուած մը տալ սուլթան Համիտի իշխանութեան: Ա-
ռանց այլ եւս ականջ կախելու ժընկի ծերունազարդ ու-
սանող-յեղափոխականներուն, միաբանեցան Կ. Պոլսոյ
Հնչակեաններուն հետ ու երեք տարի գաղտնապահու-
թեամբ պատրաստուել յետոյ, 1921 օգոստոս 14/26ին՝
1896ի քսանեւեցինգամեակին՝ ահեղ կոռի մը ձեռնար-
կեցին: Մանրամասնութիւնները 1921ի օգոստոս և սեպ-

տեմբեր ամիսներու անգլիական թերթերէն քաղելով կը
հրատարակենք:



Կ. Պոլիս, 26 օգոստոս, կէս օր

Հայ յեղափոխականները գրաւեցին Օսմանեան Պան-
բան:

26 օգոստոս ժամ 1

Հայ յեղափոխականները գրաւեցին Բէժին, Քրէտի
Լիոնէն, Պապր-Ալին: Սատրագամը, նախարարները,
գլխաւոր պաշտօնատարները յեղափոխականներուն ձեռքն
են: Ռուսական զեսպան Պ. Մաքսիմով Պանքան վագեց
եւ յեղափոխականներուն խոստացաւ բարենորոգումներու
գործադրութիւն եւ իրենց ալ ազատօրէն Եւրոպա երթալու
արտօնութիւն: Առաջարկները մերժուեցան, եւ Պ. Մաք-
սիմով իբր պատանդ վար զրուեցաւ:

ժամ 4 1/2

Յեղափոխականներուն վերջնագիրը զեսպանատուն-
ները հասաւ. կը պահանջեն օր եւրոպական մարտանա-
ւերը Պոլիս մտնեն եւ ապահովեն Հայաստանի բարեկար-
գութիւնը. 24 ժամ պայման կուտան այս պահանջում-
ները ընդունելու եւ գործադրելու համար: Դեսպանները
Երլազը գացին. փաշաները Պապր-Ալին թէլէֆոնով
սուլթանին կ'աղաչեն զոհացնել Հայերը եւ զիրենք ազա-
տել: Զինուորները պաշարեցին յեղափոխականներուն
գրաւած բոյր հաստատութիւնները:

Կ. Պոլիս, 27 օգոստոս ժամ 9

Յեղափոխականները ո՛ր եւ է սպանալիքի առջեւ տեղի
չեն ի տար. կը մերժեն խոստումներու հատալ: Դեսպան-
ները իրենց կառավարութիւններէն հրահանգ կը սպասեն:
Պետութեանց միջեւ համաձայնութիւնը անկարելի կը
թուի: Դերմանիա սուլթանին ընդդիմադրութեան խոր-
հուրդ կուտայ: 96ի սոփածիւնները երեւան եկան: Բոլոր
հայ խանութները գոց են: Եւրոպացիները աներկիւղ ի-
րենց վաճառատունները եւ գրասենեակները բացին:

Կ. Պոլիս, 27 օգոստոս ժամ 1

Յեղափոխականներուն կողմէ տրուած պայմանաժամը
լրացաւ. հանդարտութիւնը կը տիրէ: Երլազը, զեսպա-
նատունները, եւրոպական գաղթականութիւնները անվոր-
գով են. ամենքն ալ վստահ են որ յեղափոխականները
չուտով անձնատուր կ'ըլլան:

ժամ 1 1/2

Յեղափոխականները օրը հանեցին Պանք Օթումանը,
Բէժին, Քրէտի Լիոնէն, Պապր-Ալին: Այս շէնքերը գրա-
ւող յեղափոխականները, եւրոպացի պաշտօնատարները
300ի չափ, որոնց մէջ ռուսական զեսպան Պ. Մաքսիմով,
սատրագամը, թիւրք նախարարները, 500 թիւրք պաշ-
տօնեայ ամենքն ալ օրը ելան:

Ժամ 1 3 4

Երկինքն քար, երկաթ, մարմնի բեկորներ, փայտ, կարկուտի պէս կը տեղան. զարհուրելի գոռում գոչում կը թնդացնէ Ստամպոլ եւ Ղալաթիա: Յեղափոխականները պաշարող թիւրք զինուորները մասամբ սպաննուեցան, մասամբ վիրուսուեցան:

Սերասքէրէն զինուորները խուժեցին Ստամպոլ եւ Ղալաթիա. Երբ գացին երը ջարդեն, անոնց հաստատութիւնները թաւ սնի կուտան: Հայերը նախապէս պատրաստուած ըլլալով ապահով վիճակի մէջ են: Ամենքն ալ զինուած խաները եւ տուններն են: Ստիպանները իրենց մէջ բազմաթիւ դիակ ձգելով Հայոց տուններուն եւ խաներուն առջեւ լեղապատառ փախան:

Ժամ 4

Վոսփոր կատրած: Սարըեարի թիւրքերը միանալով լեռներէն իջած զինուորներուն յարձակեցան Պէոյիքտէրէ եւ Թարապիա դեսպանատուններուն և Երոպացիներու վրայ: Դեսպանները ընտանիքով հագիւ կրցան ապաստանիլ իրենց մարտանաւերը: Դեսպանատունները կ'այրին:

Ժամ 4 1 2

Պատահարները ընդծովեայ հեռագրով Երոպա հարուցեցան: Դեսպանները ստիպողաբար պահանջեցին սր երոպական մարտանաւերը ներս մտնեն:

Օգոստոս 28, ժամ 9

Մարտանաւերը Մարմարայէն կուզան. կատարեալ անիշխանութիւն:

Ժամ 11

Մարտանաւերը Մարմարայէն եւ Սեւ Մովէն Վոսփոր մասն: Երբ լորը յեղափոխութիւն. սուլթան Համիտ խեղդամահ սպաննուեցաւ:

* * *

Երոպական նաւատորմը Վոսփոր մտնելէ յետոյ 30,000 զօրք ցնմաք ելան: Վեց ծովակալները ստանձնեցին կ. Պոլսոյ առեւտրայ կառավարութիւնը: Նոր սուլթանը անմիջապէս վաւառները խիստ հրամաններ խրկեց քրիստոնեաներու ո՛ր եւ է փես չհասցնելու համար: Քիչ ետքը Պետութեանց միջեւ համաձայնութեամբ Բարիզ դեսպանախորհուրդը գումարուելով Արեւելեան խնդիրը կարգադրուեցաւ հետեւեալ եղանակաւ.

1. Հայկական հինգ նահանգներու ինքնավարութիւն, վեց պետութիւններէ նշանակուած եւ եօթը տարուան պաշտօնավարութեան շրջանով երոպացի բարձրագոյն քովտերի մը կառավարչութեամբ: Կառավարիչը հինգ տարի իր արամադրութեան տակ պիտի ունեցայ 10,000 պելժիկացի զինուոր:
 2. Երոպական հեղափոխութեամբ բարեկարգութիւն եւ բարոյական եւ առիական թիւրքերոյ նահանգներուն:
 3. Ընդհանուր թիւրքերոյ վարչութեան վրայ երոպական վերին հսկողութիւն, Պոլիս հաստատուած միջազգային բարձրագոյն յանձնաժողովի մը միջոցաւ:
- Դեսպանախորհուրդը իր որոշումները հրատարակեց

1921 սեպտեմբեր 18/30ին. ընդհանուր գոհունակութիւն աշխարհի մէջ:

* * *

Դրօշակ այս դէպքերը «Մի պարտութիւն» խորագրին տակ համառոտաբար պատմելէ յետոյ, իր խորհրդածութիւնները կը կցէր անոնց: Կը բաղնէ հետեւեալները.

«Օգոստոս 14 26ին Պոլսում Բանկը, Բէժին, Կրէդիտ Լիոնիզը, Բար-Ալին կործանվեցան: Յաղթվեցանք:

Պոլսում թուրքերի, երոպացիների արիւնը հոսվեց, ու կեղտաւ հայ բուրժուաներին, նրանց սարուկ համալներին սչինչ չպատահեց: Յաղթվեցանք:

Սուլթանը սպանվեց: Յաղթվեցանք: Հայաստան ինքնավար հռչակվեց: Յաղթվեցանք:

Մեր պարտութիւնը խոստովանելու քաջութիւնը ունենք: Դաշնակցութիւնս իր երեսուն տարիների փառաւոր պատմութեան մէջ մի սեւ էջ ունեցաւ. բայց պէտք է ասել թէ դա Հնչակեանների եղբիտական դաւաճանութեան հետեւանքով է: Մենք վաղուց գուշակել էինք թէ մի օր այդպիսի զբաղգութիւն կը պատահէ մեզ հետ եթէ Հնչակեանների հետ միաբան լինենք: Հնչակեան եղբիտաներին յաջողվեց խաբել Պոլսի Դաշնակցականներին եւ նրանց ուժերից օգտվելով դաւաճանել մաքուր յեղափոխութեան դէմ:

Պոլսում անփորձ Դաշնակցականները խաբուելով ալուէս Հնչակեաններից նրանց հետ միասին իրանց մարմնի բեկորները թթի նման թափեցին օդիցը թուրք զօրքերի առաջ, եւ նրանք ծիծաղում էին: Իսկ 96ական թվականներին այդ թուրք զօրքերը կատաղում էին երբ մեր Արմէն կարօները, մեր Հրաչները բանկից ողջ պրծելով, բարիքօք իրանց շրթների վրայ ծիծաղելով հերոսաբար անցնում էին իրանց առջեւիցը: Հերոսը այսպէս պէտք է լինի: Մենք լաւ յիշում ենք ինչ որ մի հոսհոս սրանից մի քառորդ դար առաջ գրում էր, «Հերոսը չի բռնուիր, չի բանտարկուիր, չի ծեծուիր, չի մեռնիր»: Ամբողջ իրանց կեանքումը Պոլսի հոսհոսները մի ճշմարտութիւն են ասել, և մենք էլ այդ մեր զիւղեցիան ենք արել: Նրանք ուրեմն որ Բանկին հետ, Բարը-Ալին հետ փշրվեցան, հերոս չեն, անարժան յաջորդներ են Արմէն կարօների, Հրաչների:

Այո՛, ընդունում ենք որ այս անգամ անսիրտ պետութիւններին յաջողվեց Յեղափոխութեան մի մեծ հարուած տալ: Նրանք իրանց բոլոր ինտրիգաներովը չէին կարողացել սպաննել Յեղափոխութեան գաղափարը, նրանք մի ճիւղային մտածութեամբ կամենում են Հայաստանը ինքնավար անել, որով Հայ ժողովուրդը այլ եւս հրաժարվէ Յեղափոխական տենդենցիայից: Բայց խաբվում են: Պիտի կովենք, պիտի կովենք, պիտի կրովենք: Երոպացի մի ինչ որ կոմիտեր իր սաքը Հայաստանում գնէ, հէնց նոյն րոպէին Դաշնակցական գաշտյնը նրա փորը կը մխվէ:»

ՍԿԵՊՏԻԿ

ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԸ ԵՒ ՊԱՆՈՏԸ. Կ. Պոլսէն յու- յիս 15 րոշականով կը հետագրեն «Սրահնարտ»ի.

«Հայոց պատրիարքը մեկ քանի օր առաջ անձամբ հրատարակեալ մատուց պատար: Ասիկա հետեւեալն էր վերջին զանազան դեպքերուն, ի միջի այլոց ոստիկանա- րեան նախարարին տուած այն տեղեկագրին քէ Կ. Պոլ- սոյ մէջ վերջերս պատահած քաղմարիչ հրդեհներն ու փողոցի անկարգութիւնները հայ յեղափոխականներուն գործն էին, եւ քէ անոնց գործունէութիւնը կատեցնելու միակ միջոցն էր իբր տասը հազար ամուրի Հայ Կ. Պոլ- սէն դռնու հանել: Փոքր-Ասիոյ քրիստոնէայ ընկիւնե- րուն վիճակը, որոնք ու եւ ք պաշտպանութիւն չեն զաներ տեղական իշխանութիւններէ՝ տեղական հարստահարու- րեանց եւ Քիչրուերու յարձակումներուն դեմ, զանգարուի ուրիշ նիշք մը կը կազմէր:

«Պատրիարքին այս գործին առաջին հետեւեալն է- դաս ներքին գործերու նախարարին հրատարեցնուան լուրը. բայց քիչ ետքը լուր ելաւ քէ սուրբաւր Խոթիացի ասկանակոչ պատուանշանը շնորհած է նոյն նախարարին: Այսու հանդերձ, երկէ իրատե մը ելաւ յայտարարող քէ պատրիարքին զանգաւները լուրջ նկատողութեան առ- նուած են եւ անոնց զոհացում տրուած է: Խեղիքը այս- պէս առ այժմ վերջացած է:»

Յուլիս 8 րոշականով Կ. Պոլսէն կը գրեն մեզ.

«Խառն ժողովը կ'ըզգէ յիշատակագիր մը ներկայացը- նել պատար, մատնանիշ ընելով Հայոց անտանելի կա- ցութիւնը, և սպանաւորով հրատարիչ եթէ դարման մը չտար- ունի այս կացութեան: Իմ կարծիքովս, սուրբաւր քա՛ն մը պիտի չընէ:»

Կ. Պոլսէն «Թայմզ»ին կը նետագրեն քէ սուրբաւր հրամայած է անբողջապէս ջնջել այն բոլոր պարտքերը զոր Հայոց վանքերը կ'առաջարկէին իրենց: Նախկին Լա Հէյի Համաժողովին ռզղուած բողոքագրին մասին. (Տես «Նոր Կեանք» յունիս 15):

ԼՈՒՐԵՐ ԶԱՄԱՆԱԿԱՆ Կ. Պոլսէն կը գրեն մեզ յուլիս 10 րոշականով.

«Սուրբաւր մեծապէս յուզուած է Կ. Պոլսէն Լա Հէյի Համաժողովին ռզղուած բողոքագրին մասին. (Տես «Նոր Կեանք» յունիս 15):

«Կը հաշտուեն քէ Արքիե փաշա ու եւ ք մասնակցու- րիւն ունեցած չէ Օրմանեան պատրիարքին Լա Հէյի Համաժողովին ռզղուած հետագրին մէջ: Օրմանեան ինք իր գլխուն, առանց խորհուրդ հարցնելու Արքիե փաշա- յին որ երեք օր յետոյ միայն հետագրին լուրը իմացած է, առանց Երջուրդին բռնադատուելու, եւ առանց Խառն ժո- ղովին անդամներուն կարծիքը առնելու, խմբագրած, ըս- տորագրած եւ դրկած է այդ հետագիրը:»

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐ ՀՈՒՄՆԵՐԸ. Կ.

Պոլսէն կը գրեն «Սրահնարտ»ի. Լուր կայ քէ ներքին գործերու նախարարութեան մէջ նոր դիւան մը պիտի հաստատուի, պաշտօն ունենալով արձանագրել քրիստոն- էայ հպատակներուն ամուսնութիւնները, ծնունդները եւ մահները, եւ հսկել անոնց ըրած կրօնական գործարքու- րեանը: Ասիկա կը նշանակէ ջնջել պատրիարքներուն մի- չեւ նիւս վայելած իշխանութեան մեկ մեծ մասը:

ԱՐԲԱՆ ԿԸ ԶԲՕՄՆՈՒ. Անգլիական քերթերը կը ծանոցանան քէ սուրբաւր, իր պարսպոյ ժամերը զուար- ձացնելու համար, հրահայեր է որ Անտուոյնի երկարու- դիին անբողջ երկայնքը սիւնեաւորկրափներ առնուին, ո- թով պիտի կրնայ, իր սենեակին մէջէն, շոգեկարքին դիտ- ուած տեսարանները վայելել իրենց ձղոջութեանը և յարա- նորոգ պէսպիսութեանը մէջ:

«Ուսումնական կազմ»ը իրաւամբ դիտել կուտայ որ սուրբաւր անշուշտ գիտական այլ գրաստի նորութե- նէն պիտի օգտուի նաեւ էրէ նոր ջարդեր տնօրինէ Հա- յաստանի մէջ, ու այսպէս, իր Երջուրդի որչէն, պիտի կրնայ տեսնել քէ իր հրամանները ի՛նչքան ձղոջութեանը ի գործ կը դրոշին:

ԳՈՒՄՆԻՐՈՒԹԵԱՆ մը վախերը միշտ Երջուրդի պա- յատը կը տիրեն: Սուրբաւրին քիկնապան զոհնիւն սպանե- րին լորսը բանտարկուելու են, զօրքերը Երջուրդի վրայ յարձակումի գրգռած բլլալու անբաստանութեանը: Երի- տասարոյ թիւրքերուն իբր դիւանակց ձերբակալուելու են: Բիշտա պէյ, որդի երբեմն սատրապալ եւ արքայ մեծած համբաւաւոր Բիշտա փաշային: Թի ծովին եւ քէ ցամա- քին Պոլիս մտնողներուն դեմ ոստիկանա՛ւն խստութիւն- ները շատցեր են:

ՀԱՍՏԻ ՈՒ ԲԱԺՆԵՐԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկիւն ղրկել առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND). LONDON, W.C.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 Ին Եւ 15 Ին: Բաժնեկիւն է Երբայայի համար տարեկան 10 Եւ վեցամսեայ 5 Քրանք, Ամերիկայի համար տարեկան 2 Եւ վեցամսեայ 1 տոլար: